

12-13(651-652)

30.04.2022

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԱՊԱՎԻՆԵՆՔ ՄԵՐ ՆՈՒՅՆԱԼԵՉՈՒ ԵՎ ՄԻԱՅՈՒԿԱՏ ԱՄԲՈՂՉՈՒԹՅԱՆԸ

Ավելի քան մեկ դար է՝ ապրիլ ամիսը հայերիս մոտ աստղացվում է հայրենագրկման ու կորստի ցավի հետ: Խորհրդային տարիներին, չունենալով ինքնուրույն պետականություն, հայ ժողովուրդը ինտերնացիոնալ մեծ ընտանիքում պարտավոր էր խոսել բացառապես կոմունիստական «պայծառ» ապագայի մասին: Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը (նրա հետ նաև Արցախը) անկախության ուղին բռնեց և, թվում էր, Ցեղասպանության ծանր թեման պետք է փոխարկվեր համազգային միասնության ու վերհառնումի սուրբ գաղափարի: Այդպես եղավ մի որոշակի փուլում, երբ հայոց միացյալ բռունցքը վեր խոյացավ ու ցատկով զարկեց ոսոխին: Հետայդու, սակայն, արյանք նվաճված հաղթանակը չկարողացանք պահել և նորից տարածքների ու մարդկային ցավալի կորուստներ ունեցանք:

Ինչո՞ւ: Այս հարցը հաճախ ենք առիթով կամ անառիթ հնչեցնում, և եթե անգամ դրա պատասխանը յուրովի գտնում ենք, ճշմարտության մեր ներքին ընկալումն ավա՞ղ տարբեր է: Սա նշանակում է, որ միասնականության գաղափարը կամ ճեղք է տվել, կամ էլ արդեն չենք կարողանում մայել միևնույն ուղղությամբ:

Ցավն ընդհանրական կրելը բնավ փարատում չէ, այն պիտի կարողանալ ամոքել: Եղե՞նքի ցավն ամոքելու լավագույն ձևը դրա կրկնության բացառումն է և իրավաքաղաքական գնահատման բերելը, իսկ դա կարող է անել միայն պետականակիր հայը: Պետականակիր են այսօր բարձրագույն պաշտոնյան ու անձեռնմխելիությամբ օժտված աստիճանավորը, մատյանը կոնատակին դասասենյակ փութացող մանկավարժն ու ձեռքերը հողաթաթախ շինականը, գիտնականն ու աշակերտը... Հի կարելի սեփականաշնորհել հաղթանակը, որովհետև երբ այն պատկանում է մեկին կամ մի քանի հոգու, մյուսներին բաժին է հասնում միայն նորին փոքրություն պարտությունը: Գո՞ւցե դրա մեջ փնտրենք մեր հաղթանակները կորցնելու իրական պատճառները:

Ասում ենք՝ բանակը մեր ժողովրդի անվտանգության երաշխավորն է: Նույնն է, թե ասենք, որ մեր մարմնի անվտանգության երաշխավորը մեր ձեռքերն են, որովհետև կարողանում են սպառնացողին հարվածել և հարվածից պաշտպանել: Բայց, այս, ձեռքերին գործելու երաշխիք տվողն ուղեղն է, սիրտը, հոգին... Մենք միասնական օրգանիզմ ենք՝ ՀԱՅ, ամեն մեկս մեր անհատական կարողությամբ ու յուրովի առաքելությամբ: Համախմբվենք, ուժեղանանք, նորանոր հաղթանակներ կռենք, որպեսզի գալիք սերունդներին փոխանցելու բան ունենանք: Ավելին, Մեծ եղեռնի զոհերի առաջ դեռ պարտք ունենք կատարելու. խաչով լինի, գրչով լինի, գնալ հասնել Արարատ:

Կգնանք ու կհասնենք անպայման, եթե ապավինենք միայն մեր նույնալեզու և միահավատ ամբողջությանը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Հոգի. ԹՈՒՄԱՆՅԱԼ

## ՄԵՐ ՈՒՆՏԸ



Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս, Ու զընուն ենք մեր ճամփով, Մըրիկներով պատած անհույս, Սև խավարով, մութ ամպով:

Մենք անցել ենք արյան ծովեր, Սուր ենք տեսել ու կըրակ, Մեր ճակատը դեմ ենք արել Մըրիկներին հակառակ:

Ու թեպետև պատառ-պատառ Մեր դըրոշը սըրբազան, Ու մենք չունենք տեղ ու դադար՝ Երկրից երկիր ցիրուցան:

Բայց զընուն ենք մենք անվեհեր Ձարկերի տակ չար բախտի, Մեր աչքերը միշտ դեպի վեր՝ Դեպի լույսը մեր ուխտի:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Ապրիլի 29-ը նշվում է որպես Պարի միջազգային օր: Տոնի կապակցությամբ Ստեփանակերտի պարարվեստի քոլեջում տեղի է ունեցել պարզևատրման արարողություն:

ԱՅ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը պարարվեստի բնագավառում ներդրած ավանդի համար պարարվեստի քոլեջի գեղարվեստական ղեկավար, Արցախի Հանրապետության վաստակավոր արտիստ Միեր Բաբայանին է հանձնել ԱՅ նախագահի հրամանագրով շնորհված «Վաչագան Բարեպաշտ» մեդալը:

Իսկ պարարվեստի բնագավառում ունեցած արդյունավետ աշխատանքային գործունեության համար Նաիրի Ազատյանը, Տաթևիկ Բաբայանն ու Դիանա Համբարձումյանը պարզևատրվել են ԱՅ ԿԳՄՍ նախարարության պատվոգրերով:

Ա. Հակոբյանը շնորհավորել է ոլորտի բոլոր ներկայացուցիչներին, մաղթել նորանոր ձեռքբերումներ:



## ԵՐԳՈՎ ԼԻՆԻ, ՊԱՐՈՎ ԼԻՆԻ ՊԻՏԻ ԳՆԱՆՔ...



Պարի միջազգային օրվա առթիվ ԱՅ ԿԳՄՍՆ նախագորակոչային պատրաստության և արտադպրոցական ծրագրերի վարչության արտադպրոցական ծրագրերի բաժնի կողմից Ստեփանակերտի հ. 2 դպրոցի բակում կազմակերպվեց «Ազգային երգն ու պարը՝ մեր ինքնության հիմնաքար» խորագրով երաժշտական փառատոն, որին մասնակցեցին Ստեփանակերտի հանրակրթական մի շարք կրթօջախների, Ասկերանի, Հաղրուքի, Շուշիի, Մարտակերտի շրջանից՝ Հաթրի, Մարտունու շրջանից՝ Սոսի, միջնակարգ դպրոցների աշակերտները:

Մեր ոխերին թշնամին իր

անփոփոխ ձեռագրով տարիներ շարունակ փորձում է վտարել արցախցուն իր պապենական հողից, բայց նա շարունակում է դիմակայել արհավիրքներին: Դրա մի ապացույցը այս փառատոնն է: Արցախցի երեխաները միանում են միջազգային կազմակերպությունների, տվյալ դեպքում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմանը՝ դառնալով պարի հիասքանչ աշխարհի մի մասնիկը մեր ազգային մշակույթով, անկախ այն բանից, որ այդ կազմակերպությունները լուռ մնացին, երբ բիրտ թշնամու կողմից 44-օր-

յա պատերազմում կոխկրտվում էին իրենց իրավունքները:

Ազգային երգ ու պարի հզոր ոգին միասնաբար ցուցադրելով՝ երեխաներն իրենց միակամությունը և հավատը հայտնեցին մեր կուրուսյալ տարածքները վերադարձնելու ուժին:

Ձեռք ձեռքի, ուս ուսի տված պարում էին երեխաները՝ կարծես ասելով, որ հենց իրենց սերունդն է ամոքելու վիրավոր Արցախի վերքերը,

«Այսօր դուք ապացուցեցիք, որ ունեք մարտական ոգի: Այդ ոգին մեզ էլ փոխանցեցիք, ինչի համար շնորհակալ ենք», - ԱՅ ԿԳՄՍ նախարարի խորհրդական Մելանյա Բալայանը Պարի միջազգային օրվա առթիվ շնորհավորեց երեխաներին ու ներկաներին:

Շնորհավորանքի խոսք ասաց նաև Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի վարիչ Թերեզա Ղաբախանյանը:



միասնականությամբ, մեր ազգայինը պահպանելով՝ ապրելու ու հարատևելու կամքը Քոչարու զարկերի տակ հաղորդելով ոչ այնքան հեռու դարանակալած թշնամուն:

Միջոցառմանը մասնակից դպրոցները նախարարության կողմից պարզևատրվեցին պատվոգրերով:

Սեփ. լրատվություն

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ ԱՄՓՈՓՈՒՄ

Հանրակրթության ուստարվա կարևոր միջոցառումը առարկայական օլիմպիադաներն են: Դրանք ի ցույց են անում՝ ինչպես են աշխատում դպրոցները, դասավանդողների և սովորողների ինչ ներուժ ունենք:

Ապրիլի 6-ին Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ. 1 դպրոցի դահլիճը մեկտեղել էր հանրապետության ամենահիմնական դպրոցականներին: Տաղանդավոր աշակերտներին ի հայտ բերման նպատակով տարվա գլխավոր միջոցառման արդյունքների ամփոփումն էր ու լավագույններին մրցանակների հանձնումը: Ողջույնի և շնորհավորանքի խոսք ասաց ԱՅ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը: Նախարարը կարևորեց ազգային արժեքները պահպանելու և սերունդներին փոխանցելու, մատաղ սերնդին հայրենասիրության ոգով դաստիարակելու գործում հանրակրթության դերը և այդ առումով փաստեց, որ Արցախ աշխարհում մեծանում է հիանալի սերունդ, որն իր մեջ կրում է այդ արժեքանակարգը, և որի դաստիարակման գործում անուրանալի է հանրակրթության բոլոր օղակների մվիրյալ ուսուցիչների դերը: Ներկա աշխարհաքաղաքական լարված պայմաններում նրանք անում են հնարավորը՝ արժանապատվորեն դիմակայելու ծառայած մարտահրավերներին, ինչի համար նախարարը նրանց շնորհակալություն հայտնեց:

Օլիմպիադայի արդյունքների վերլուծությանը հանդես եկավ ԱՅ ԿԳՄՍ կրթության և գիտության վարչության պետ Ռայա Մուսայելյանը:

Նրա խոսքով, չնայած մեր հանրապետությունում առկա լարված իրավիճակին, օլիմպիադայի արդյունքները թե՛ քանակական, թե՛ որակական առումով ավելի գոհացուցիչ են, քան ակնկալվում էր:

Մեր դպրոցականների ներհանրապետական փուլի արդյունքները պահպանվել են ՀՀ եզրափակիչ փուլում, ինչը վկայում է, որ նրանք ունեն տվյալ առարկաներից խոր ու կայուն գիտելիքներ: Դա ուսուցչի և աշակերտի միասնական աշխատանքի արդյունք է: Օլիմպիադայում աչքի ընկած աշակերտների ուսուցիչները համեստորեն ասում են, որ իրենց ասներն օժտված են բնատուր կարողություններով: Անշուշտ, դրանք վեր հանելու առաքելությունը ուսուցչինն է. այն աշակերտն է կարողանում արդյունք ցույց տալ, որն ունի կարողություններ և դրանք զարգացնող ուսուցիչներ:

ԿԳՄՍ նախարարը դիպլոմներ և դրամական պարգևներ հանձնեց մրցանակակիրներին:

Անդրադառնալով օլիմպիադայի ամենահետաքրքիր մասին՝ նոր անուններին:

Մեր Համբարձումյան, Սանասար Սարգսյան, Մաքսիմ Թևոսյան, Տաթևիկ Բաղդասարյան. ահա այս տարվա առարկայական օլիմպիադայի հերոսները:

Մեր Համբարձումյան, Շուշիի Դ. Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ,



պատմության օլիմպիադայում Արցախում գրավել է 2-րդ, իսկ ՀՀ-ում՝ 1-ին տեղը: Նա օկուպացված Սարգսյան գյուղից է: Երազում է դառնալ միջազգային իրավունքի մասնագետ, որպեսզի պաշտպանի Արցախի և հայ ժողովրդի շահերը:

Սանասար Սարգսյան, սովորում է Ասկերանի շրջանի Նախիջևանիկի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանում: Օլիմպիադային մասնակցել է մաթեմատիկա և աշխարհագրություն առարկաներից, ընդ որում, աշխարհագրության օլիմպիադան սկսվում է 9-րդ դասարանից: Ներհանրապետական փուլում մաթեմատիկայից գրավել է 2-րդ, աշխարհագրությունից՝ 1-ին տեղը: ՀՀ եզրափակիչ փուլում այս առարկաներից համապատասխանաբար զբաղեցրել է 2-րդ և 3-րդ տեղերը: Դեռ չի ընտրել, թե ինչ ուղղությամբ է շարունակելու ապագան: Մեզ հետ զրույցում դպրոցի տնօրեն Գալինա Մեդույանն ասաց, որ Սանասարը հավասարապես ուժեղ է բոլոր առարկաներից: Շատ է սիրում գրքեր ընթերցել. «Բազմակողմանի հետաքրքրություններ ունեցող աշակերտ է: Նա հետազայում նույն հաջողություններն ուրիշ առարկաներից կարող է ունենալ, դրա համար էլ չի կողմնորոշվում: Նրա հետաքրքրությունների շրջանակը բավականին լայն է. տղա երեխաների մոտ հազվագյուտ երևույթ է գեղար-



վետական գրքերի ընթերցանությունը: Նա արդեն պատմավեպեր է ընթերցում, հանրագիտարաններ: Եթե մյուս երեխաներին ուսուցիչները համոզում են, որ գրքեր կարդան, Սանասարին հորդորում են, որ քիչ ընթերցի»:

Մաքսիմ Թևոսյան, Ասկերանի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ, թշնամու վերահսկողության տակ անցած Ակնադրյուր գյուղից է:

Աշխարհագրությունից Արցախում և ՀՀ-ում գրավել է 1-ին տեղը: «Ուսումնասիրում եմ Հայաստանի



տնտեսությունը, արդյունաբերությունը, հետաքրքրված եմ Արևելքի երկրների մշակույթով, նաև լեզուներ են ուսումնասիրում»,- ասում է Մաքսիմը: Մեր երկրում ստեղծված իրավիճակի մասին հաճախ է մտածում, տնտեսական խնդիրների լուծման համար տարբերակներ ունի:

Տաթևիկ Բաղդասարյան, Մարտակերտի հ. 1 միջնակարգ/հոսքային դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի, Հայ եկեղեցու պատմությունից ՀՀ-ում գրավել է 1-ին տեղը, պատմությունից արժանացել զոլասանագրի: «Պատմությունից բազում դասեր ուսանելով՝ կարող եմ պնդել, որ ներկա ժամանակում հայրենիքը կարելի է պաշտպանել գրչի և խաչի գործությամբ»,- հավատացած է նա:

Ստապահենք նաև այս անունները՝ Գոռ Հակոբյան, Ստեփանակերտի հ. 6 հիմնական և Գոռ Հարությունյան՝ Մաճկալաշենի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտներ: Նրանք մաթեմատիկայից ՀՀ եզրափակիչ փուլում արժանացել են զոլասանագրի:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՐՃԱՆԻ ԴՊՐՈՅԱԿԱՆՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԽ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



Արցախի Հանրապետության դպրոցականների համար ավարտվեց հերթական մի մրցափուլ ևս, որտեղ նրանք 15 առարկաներից ցուցադրեցին իրենց գիտելիքները: Խոսքը Արցախի դպրոցականների 2021-2022 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի մասին է, որի առաջին (ներդպրոցական) և 2-րդ (շրջանային) փուլերի արդյունքների ամփոփումից հետո հանրապետական փուլին մասնակցելու համար մրցասպարեզ էին մտել 371 դպրոցականներ: Հուրախություն բոլորիս՝ հարկ է նշել, որ չնայած մեր հանրապետությունում

առկա իրավիճակին, օլիմպիադայի արդյունքները թե՛ քանակական, թե՛ որակական առումով ավելի գոհացուցիչ էին, քան ակնկալում էինք:

Կրթության համակարգում իրականացվող բոլոր բարեփոխումները մեկ նպատակ են հետապնդում՝ կրթել ու դաստիարակել այնպիսի սերունդ, որն իր գիտելիքներով ու կարողություններով գերազանցի մախորդ սերնդին:

Ուսումնառության ընթացքում դպրոցականների մոտ ձևավորված արժեքները լավագույնս դրսևորվում են ներդպրոցական, արտադպրոցական, միջդպրոցական, շրջանային կամ հանրապետական տարբեր միջոցառումներում ու մրցույթներում:

Յուրաքանչյուր երկրի կրթական խնդիրները բխում են տվյալ երկրի քաղաքացիների, հասարակության, ազգի և պետության շահերից: Կիրթ մարդը, լավ մասնագետը, դժվարություններին դիմակայելու ընդունակ քաղաքացին պետության համար հարստություն է, ինչու չէ, նաև՝ հպարտություն:

Ուսուցման նպատակն է՝ խթանել աշակերտի մտածողությունը, կատարելագործել նրա

ինքնուրույնությունը, հնարավորություն տալ պատկերավոր մտածելու և, որ ամենակարևորն է՝ այդ ամենը զրազետ ի ցույց դնել: Նման միտում ունեն նաև դպրոցականների առարկայական օլիմպիադաները:

Հայտնի է, որ օլիմպիադայի նպատակն է տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություններ ունեցող երեխաների հայտնաբերումը, ուսումնական առարկաների նկատմամբ նրանց հետաքրքրությունների զարգացումը, այդ առարկաներից խոր ու կայուն գիտելիքներ ստանալուն նպաստելը:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021թ. դեկտեմբերի 2-ի N 655/Մ հրամանի համաձայն՝ ս. թ. հունվարի 19-ից փետրվարի 15-ն ընկած ժամանակահատվածում Ստեփանակերտի հ. 9 հիմնական դպրոցում 15 առարկաներից (հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա, Հայոց եկեղեցու պատմություն, նախնական զինվորական պատրաստություն) անցկացվեց Արցախի դպրոցականներ-

րի 2021-2022 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը՝ Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլի ժամանակացույցի համապատասխան՝ յուրաքանչյուր առարկայի հատկացվելով առանձին օր: Առարկայական օլիմպիադայի 2-րդ փուլի առաջադրանքները հունամիտար առարկաներից կազմել են նախարարության մասնագետները, իսկ բնագիտական առարկաներից տրամադրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Հանրապետական փուլի առաջադրանքները, ինչպես նախորդ տարիներին, բոլոր առարկաներից մեզ է տրամադրում ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

Շրջվարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության և սպորտի բաժինները օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փուլի արդյունքների ամփոփման հիման վրա հանրապետական փուլին մասնակցելու իրավունք են շնորհել 371 աշակերտի, որից բացակայել է 8-ը:

Ներկայացնենք մասնակիցների քանակը՝ ըստ շրջանների.

**ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Շրջանը /քաղաքը/	2021-2022
Ե.Ստեփանակերտ	167 մասնակից
Ասկերանի շրջան	58
Մարտակերտի շրջան	59
Մարտունու շրջան	60
Հաղորւթի միջն. դպրոց	14
Շուշիի շրջան	10
Քաշաքաղի շրջան	3
<b>ԸՆդամներ</b>	<b>371 մասնակից</b>

Մասնակիցների քանակը՝ ըստ առարկաների.

ԳԳ	Առարկան	2021-2022 ուստարի	Բացասական միավոր ստացած աշակերտների քանակը
1	Հայոց լեզու	70	19
2	Հայ գրականություն	15	2
3	Ռուսաց լեզու	54	-
4	Անգլերեն	37	10
5	Ֆրանսերեն	6	4
6	Գերմաներեն	1	-
7	Պատմություն	11	-
8	Աշխարհագրություն	14	-
9	Մաթեմատիկա	86	52
10	Ֆիզիկա	3	2
11	Քիմիա	1	1
12	Կենսաբանություն	27	-
13	Ինֆորմատիկա	8	8
14	Հեղ	6	-
15	ՆՁՊ	32	1
	<b>ԸՆդամներ</b>	<b>371</b>	

Բոլոր առարկաներից գրավոր աշխատանքների ստուգումները ԱՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով ստեղծված առարկայական ստուգող հանձնաժողովների կողմից սկսվել են նույն օրը, անհրաժեշտության դեպքում շարունակվել նաև հաջորդ օրը: Արդյունքները հանրապետական հանձնաժողովի կողմից նույն օրը տեղադրվել են նախարարության [www.edu.nkr.am](http://www.edu.nkr.am) կայքէջում:

Օլիմպիադայի արդյունքների ամփոփումից հետո ըստ առարկաների մրցանակային տեղերի և ակտիվ մասնակցության համար պարգևատրվողների քանակական պատկերն այսպիսին է.

Առարկա	1-ին տեղ	2-րդ տեղ	3-րդ տեղ	ակտիվ մասնակից	Մրցանակային տեղի/ակտ. մասն.
Հայոց լեզվից	-	-	2	15	2/15
Ռուսաց լեզվից	3	7	13	21	23/21
Անգլերենից	-	-	1	6	1/6
Գերմաներենից	-	-	1	-	1/-
Պատմությունից	-	3	1	2	4/2
Հայոց եկեղեցու պատմությունից	-	1	1	1	2/1
Աշխարհագրությունից	2	1	2	4	5/4
Մաթեմատիկայից	-	1	-	2	1/2
Ֆիզիկայից	-	1	-	-	1/-
Նախնական զինվորական պատրաստությունից	8	12	4	1	24/1
Հայ գրականությունից	-	-	-	1	-/1
Ֆրանսերենից	-	-	-	-	-
Քիմիայից	-	-	-	-	-
Կենսաբանությունից	-	-	-	-	-
Ինֆորմատիկայից	-	-	-	-	-
<b>ԸՆդամները</b>	<b>13</b>	<b>26</b>	<b>25</b>	<b>53</b>	<b>64/53</b>

Մրցանակային տեղեր չունեցանք հայ գրականություն, ֆրանսերեն, քիմիա, կենսաբանություն և ինֆորմատիկա առարկաներից: Մրցանակային տեղերի մեծ մասը բաժին հասավ ՆՁՊ (24 մրցանակային տեղ), ռուսաց լեզու (23 մրցանակային տեղ), աշխարհագրություն (5 մրցանակային տեղ) և պատմություն (4 մրցանակային տեղ) առարկաներին:

Մրցանակային տեղերի և ակտիվ մասնակիցների քանակն ըստ շրջանների հետևյալն է.

	1-ին տեղ	2-րդ տեղ	3-րդ տեղ	ակտիվ մասնակից	2021-2022 մրց.տ. հալո. մ.
Ե.Ստեփանակերտ	5	10	11	23	26/23 - 15,6 %
Ասկերանի շրջան	5	1	6	11	12/11 - 21,4 %
Մարտակերտի շրջան	3	7	4	7	14/7 - 24,6 %
Մարտունու շրջան	-	7	4	10	11/10 - 19,6 %
Հաղորւթի մ/դ	-	-	-	-	-
Շուշիի շրջան	-	1	-	2	-/2
Քաշաքաղի շրջան	-	-	-	-	-
<b>ԸՆդամները</b>	<b>13</b>	<b>26</b>	<b>25</b>	<b>53</b>	<b>64/53</b>

Մրցանակային տեղերի քանակի առումով 1-ին տեղում է Մարտակերտի թիմը՝ 14 մրցանակային տեղ, որը կազմում է շրջանի ընդհանուր մասնակիցների 24,6 %-ը, 2-րդ տեղում է Ասկերանի թիմը՝ 12 մրցանակային տեղ՝ 21,4 %, 3-րդ տեղում է Մարտունու թիմը՝ 11 մրցանակային տեղ՝ 19,6 %:

Ուզում են կանգ առնել օլիմպիադայի հանրապետական

փուլում 9-12-րդ դասարանցիների քանակական և որակական արդյունքների վրա:

Օլիմպիադայի մասնակիցներից 88-ը 5-8-րդ ցիցներ էին, որից 3-ին է հաջողվել գրավել մրցանակային տեղ, որը կազմում է աշակերտների ընդհանուր թվի 3,4 %-ը:

9-րդ դասարանի 108 մասնակիցներից մրցանակային տեղ գրավելու պայքարում բախտը ժպտացել է 29 մասնակցի (26,8%):

54 10-րդ ցիցներից մրցանակային տեղ գրավել է 20 աշակերտ (37 %):

45 11-րդ ցիցներից միայն 7 աշակերտի հաջողվեց գրավել մրցանակային տեղ (15,5 %):

12-րդ դասարանի 74 մասնակիցներից հաղթողի պատվին արժանացավ 8 աշակերտ (10,8 %):

Ամենաբարձր՝ 20 միավոր վաստակել են Ասկերանի շրջանի Խնածախի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Գոռ Մովսիսյանը և Ստեփանակերտի հ. 8 միջնակարգ հոսքային դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Մովսես Հովսեփյանը ՆՁՊ առարկայից:

19,5 միավոր վաստակել է Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի 9-րդ

դասարանի աշակերտուհի Մարիաննա Բաբայանը ռուսաց լեզու առարկայից:

19 միավոր գրանցել են Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Տիգրան Սաֆարյանը և


նր: Ինչպես նկատեցիք, մրցանակակիրների մեծ մասը 9-րդ ցիցներ են:

Այս տարի ևս օլիմպիադայի մասնակցում էին 5-12-րդ դասարանների աշա-

կերտներ: Նրանցից ուզում են առանձնացնել Ասկերանի շրջանի Նախիջևանի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտ Սանասար Սարգսյանին: Նա օլիմպիադային մասնակցել է մաթեմատիկա և աշխարհագրություն առարկաներից ու առաջ անցնելով բոլոր մրցակիցներից՝ մաթեմատիկայից գրանցել 18 միավոր և արժանացել 2-րդ կարգի դիպլոմի, իսկ աշխարհագրություն առարկայից 19 միավոր գրանցելով՝ ար-



Սկարում՝ Մարտակերտի շրջանի թիմը



Սկարում՝ Ասկերանի շրջանի թիմը



Սկարում՝ Մարտունու շրջանի թիմը



Սկարում՝ Ստեփ. հ3 դպրոցի թիմը

ժանացել 1-ին կարգի դիպլոմի: Ծափողջույններով ոգևորված անենակրտներ մրցանակակիր մասնակցին և ցանկանալով, որ ուսումնառության հաջորդ տարիներին դարձյալ մեզ ուրախացնի իր հաջողություններով:

Ինչ խոսք, ձեռքբերումներ ունենք, բայց ինչպես սովորողները, այնպես էլ մանկավարժները անելիքներ դեռ շատ ունեն:

Արցախի դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքներն ամփոփելուց հետո հանրապետական հանձնաժողովի կազմակերպիչի որոշմամբ լավագույն արդյունք ցուցաբերած 51 աշակերտներ իրավունք

ստացան մասնակցելու Հայաստանի Հանրապետությունում մարտ, ապրիլ և մայիս ամիսներին օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

Սիրելի դպրոցականներ, մեզ համար շատ կարևոր է Արցախում կիրք, բանիմաց աշակերտների առկայությունը:

Գիտելիքների մրցման ծակատուն հաղթանակներ գրանցելով՝ դուք պատասխանատվությունը նույնքան բարձր է, որքան առաջնագծում կանգնած հայ զինվորի:

Մեկ անգամ և շնորհավորում և շնորհակալություն ենք հայտնում օլիմպիադայի մրցանակակիր աշակերտներին և նոր հաղթանակներ մաղթում նրանց:

**Ուայն ՍՈՒՍԱՅԵԼՅԱՆ  
ԱՀ ԿԳՄՍՆ կրթության և  
գիտության վարչության պետ**



ՀԻՇՈՒՄ ԵՆԸ ԵՎ ՊԱՆԱՆՋՈՒՄ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՆ ԱԶԳԱՅԻՆ ՑԱԿԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐԵՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՉՈՒՆԻ

Ցեղասպանության միջազգային ճանաչման և որպես պահանջատեր հանդես գալու հիմնահարցը թերևս այն եզակի հիմնահարցերից է, որ Ափյուռք, Մայր Չայախայի հետ, իշխանություն, ընդդիմություն՝ գրեթե նույն բովանդակությամբ են արժարժում: Սակայն վերջին ժամանակներս ՀՀ իշխանության մոտեցումներն այդ հարցին հայտնվել են միանգամայն այլ հարթության վրա: «Դա սփյուռքահայության հիմնահարցն է, դրանով զբաղվում են Հայ Դատի Արևմտյան Եվրոպայի, Ամերիկայի գրասենյակները»: Իշխանության նման մոտեցումը բխում է Հայաստան-Թուրքիա սկսված հարաբերություններից: Այդ հարաբերությունները ոչնչով չեն տարբերվում ավելի քան 30 տարի առաջ հնչեցրած դրույթներից: Դեռ 1990թ. Նյու Յորքում Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, խոսելով հայ-թուրքական հարաբերությունների մասին, մշտ էլ. «Վերանալով զգայական մտածողությունից և հանդես գալով որպես պետություն՝ մենք այսօր պատրաստակամություն ենք հայտնում քաղաքականության մեղմացման և Թուրքիայի հետ սերտ հարաբերությունների հաստատման հարցում»: Շատ հավանական է, որ Գև նախագահը «քաղաքականության մեղմացում» հասկացության տակ նկատի է առել Ցեղասպանության միջազգային ճանաչման համար համահայկական պայքարի նվազեցումը: Նույն այդ ժամանակ էլ Թուրքիան առանց վարանելու հայտարարում էր, որ կշրջանցեն օբյեկտիվությունը (չնայած այն գովելի երևույթ է) և Դարաբաղի հարցում ամեն ինչով կօժանդակեն Ադրբեյջանին (ինչը և մենք ակնհայտորեն տեսել ենք Շարժման սկզբից մինչև օրս): «Հեն թաքցնի, որ Դարաբաղի հարցում Թուրքիան Ադրբեյջանի կողմն է, չպետք է հուսալ, որ հանուն գերագույն օբյեկտիվության մենք կիրառվենք Ադրբեյջանի, թեև ուզում ենք այն պատճառով, որ Հայաստանից թշնամական ինքնորոշում է հնչում ինչպես Ադրբեյջանի, այնպես էլ Թուրքիայի հասցեին»,- մշտ էլ «Միլիթեր» թերթի քաղաքական մեկնաբան Մեհմետ Ալի Բիրանը, երբ ժամանել էր Երևան:

Սակայն ես այն համոզմանն եմ, որ Հայաստանի արտաքին դիվանագիտական կորպուսը պետք է Ցեղասպանության հարցը երբեք չհամի օրակարգից և այնպիսի համահայկականությամբ արժարժի միջազգային հարթակներում, որ Թուրքիային ամեն կողմից դիտարկեն որպես ցեղասպան երկիր, որպես մարդու ազատ ապրելու հիմնարար ազատությունը սպանող երկիր, որպես անկանխատեսելի երկիր: «Անկանխատեսելի թուրքերը պետք է ջնջվեն աշխարհի քարտեզից՝ որպես քաղաքականության և մարդկության անեծք ու անոթանք: Թուրքերը միշտ էլ իրականացրել են կոտորածներ, երբ ուժ են ունեցել դրա համար: Որտեղ էլ որ նրանք հայտնվել են, իրենց հետևից թողել են արյան ջցամաքող հետքեր»,- գրել է Վիլյամ Գլադստոնը: Միաժամանակ չպետք է մոռանալ, որ սփյուռքը Մայր Չայախայի կապող հիմնական օղակներից մեկը հենց Ցեղասպանության միջազգային ճանաչման համար պայքարում նույն օրակարգ ունենալն է, և որ ամենակարևորն է, սփյուռքը, ի դեմս Հայաստանի Հանրապետության, տեսնում է միջազգային հարթակներում անկախ պետության մակարդակով հանդես եկող սուբյեկտ, որ միջազգային կազմակերպություններում՝ ՄԱԿ, Եվրասիական, Եվրամիություն և այլն, ունի որոշակի իրավունքներ՝ ամրագրված այդ կազմակերպությունների ընդունած կանոնակարգ օրենքներով:

Յուրաքանչյուր գիտակից հայ մարդ պետք է իմանա՝ Ցեղասպանությունը չի սկսվել և չի վերջացել 1915թ.: Ցեղասպանության արմատները գալիս են դարերի խորքից, այն ժամանակներից, երբ թուրքական տարրը մուսուլման գործել տարածաշրջան: Այդ ժամանակվանից էլ սկսվել են մեր ժողովրդի պատմության ամենամռայլ, ամենաողորմական էջերը: Ժամանակ առ ժամանակ այդ ողբերգական էջերը այնպիսի մասշտաբներ են ընդունել, որ նկարագրելն անգամ գարհուրելի է: Արդեն Աբդուլ Համիդ 2-րդի օրոք (19-րդ դարի 90-ական թվականներ) դարձել էր պետական քաղաքականության ուղղվածություն՝ հայկական հարցի լուծման միակ ուղին հայերի բնաջնջումն է: Իսկ երիտթուրքերը, անցնելով իշխանության գլուխ, այն համոզմանն էին, որ ազգային հարցը կլուծեն բոլոր ազգու-

թյունների ֆիզիկական ոչնչացմամբ, թուրքերի հետ կապերն նրանք, ովքեր կհամաձայնվեն անհապաղ դառնալ թուրք: «Մենք հեղափոխություն անցկացրինք, որպեսզի մեր հողում (նրանք մոռանում են, որ այդ հողերը երբեք էլ իրենցը չեն եղել) միայն ու միայն ապրեն թուրքերը, ուրիշ ոչ մի ազգ: Եթե մենք վերջնականապես չնաքրենք մեր երկիրը հայերից, արմատախիլ չանենք նրանց, օգուտի տեղ վնաս կբարենք... Հայի ամուրը պիտի մոռացվի... առիթը հարմար է, պատերազմի մեջ ենք, և մեծ պետությունները չեն կարող էապես միջամտել»: հատված դոկտոր Նազըմի Ելույթից կուսակցության գաղտնի նիստում: Այս մասին վկայում է թուրք լրագրող Տևլան Չատե Բաֆատը իր «Օսմանյան հեղափոխության մութ ծայրերը և իթիհատի հայաջինջ ծրագրերը» գրքում: Ուզում են մեկ անգամ ևս շեշտել «Պատերազմ է, և մեծ տերությունները չեն կարող էապես միջամտել» թուրք դաժնի խոստովանությունը ու համեմատել մեր օրերի հետ: Այսօր էլ մեր հիմնական դաշնակիցը (Ռուսաստանի Դաշնությունը) պատերազմի մեջ է, և արդյո՞ք թուրքերը չեն փորձի մեկ անգամ ևս իրականացնել իրենց հրեշավոր ծրագրերը: Պետք է շատ զգույշ լինել և չմոռանալ, թե ովքեր են թուրքերը, և ուր են տանում նրանց հրեշավոր նպատակները:

Ժամանակակիցներից շատերն են անդրադարձել այն բարբարոսություններին, որ իրականացրել են թուրք բռնակալները, սակայն միևնույն է, նրանք շարունակում են հերքել այն ամենը, ինչ ակնհայտ էր, ինչ վաղուց հազարավոր փաստերով, դրվագներով, լուսանկարներով, ակնատեսների նկարագրություններով հայտնի է ողջ մարդկությանը: «Համոզված եմ, որ մարդկության ողջ պատմության մեջ չկան այնքան սոսկալի ու զարհուրելի փաստեր, ինչքան այս կոտորածը. հայերի նկատմամբ վերաբերմունքը պարզ ցույց է տալիս, որ էնվերի և Թալեթի իրական նպատակն էր բնաջնջել հայերին»,- այսպես է գրել Թուրքիայում ԱՄՆ դեսպան Չեմրի Մորգենթաունը:

Որոշ արևմտամետ վերլուծաբաններ, նաև քաղաքական գործիչներ շատ անգամ այդ դժգույս տարիներին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող հակահայկական իրադարձությունների մեջ, հայերի կոտորածներում փորձում են մեղադրել Ռուսաստանին, որ ներքաշված էր համաշխարհային պատերազմի մեջ, նաև բոլշևիկներին, որոնք քաղաքական ուժ էին ներկայացնում այդ միապետության մեջ: Նրանք այդ բոլորը կապում են ռուսական բանակի կովկասյան տեղաշարժերի ռազմական գործողությունների հետ: Գուցե ճշմարտության փշրանքներ կան այդ պնդումների մեջ, բայց որ Ռուսաստանը դարձավ Արևմտյան Հայաստանից հայ գաղթականների հիմնական ընդունողը, նրանց պատասպարողը, նրանք մասին հոգ տանողը, մոռանալ չի կարելի: Եվ որ բոլշևիկները առաջինների թվում իրենց բողոքի ծայրը բարձրացրին, կարելի է դատել Ս. Մ. Կիրովի հետևյալ փաստարկներից: Սիա թե ինչ է գրել նա «Թերեք» թերթի «Народ страждующий» հոդվածում 1915թ. «Օրավոր Թուրքահայաստանից ստացվում են միևնույն մոզմանցային լուրերը, թե ինչ են անում այնտեղ թուրքական զորքերը, այդ մասին չեն կարող լրիվ պատկերացում տալ հայ կանանց ու երեխաների արցունքները, իսկ սարսափներ ու տանջանքներ ապրող հայ կանանց և երեխաների թափած արյունը միայն որոշ, հեռավոր պատկերացում է տալիս հայ ժողովրդի գողգոթայի մասին... Երբ մարդկային արյան գետերը կդադարեն հոսել, նոր Դանթեն կնկարագրի հայ ժողովրդի առաքապանքների պատկերը»: Նոր Դանթեի անվան տակ հանդես եկան հայ տաղանդավոր բանաստեղծները՝ Չարենց, Շիրազ, Անակ, որոնք նկարագրեցին այդ ողջ գողգոթան: Նույն թերթում հրապարակված մի այլ հոդվածում Կիրովը վերստին անդրադառնում է հայ գաղթականների վիճակին. «Այնտեղ՝ հայրենիքում, կորցրին ամեն ինչ, այստեղ՝ մեզ մոտ նրանք պետք է գտնեն մնացածը... Անպատկած, անարգված մուրացիկ դարձած՝ նրանք թափառում են մեր երկրներում... Մենք առաջինը պետք է օգնության ձեռք մեկնենք իրենց մոխրակույտերը լքած հայ գաղթականներին, նրանք մեզ մոտ են գալիս այն վայրերից, որտեղ իրենց խոշտանգում, բնաջնջում են, և մենք պետք է նրանց դիմավորենք ու տաքաց-

նենք»: Հազարավոր հայեր փրկվեցին հենց այդ երկրում:

Կարելի է հեշտությամբ մոռանալ և փորձ անել բարեկամանալ մի ժողովրդի հետ, որը շուրջ 30 տարվա ընթացքում (1894-1922թթ.) կոտորեց 2 մլն 640 հազար հայերի և հարյուր հազարավոր այլ ազգային փոքրամասնությունների՝ հույների, ասորիների, եզդիների (անգամ վերջին տարիներին Սիրիայում, Իրաքում եզդիական բնակավայրեր էին ավերում, ժողովրդին կոտորում, ինչպես նաև այդ երկրներում ապրող քրդերին էին փորձում ցեղասպանության ենթարկել):

Ինձ համար զարմանալի է, միաժամանակ տարակուսանք առաջացնող, թե ինչու Թուրքիայի կողմից ցեղասպան ժողովուրդները՝ հայեր, հույներ, ասորիներ, եզդիներ, քրդեր, չեն ստեղծում հակաթուրքական պայքարի ճակատ և իրենց իրավունքների պաշտպանության համար օգտագործում միջազգային կառույցները՝ ՄԱԿ, Եվրամիություն, Եվրասիական կառույցները և այլ հեղինակավոր կազմակերպություններ: Որքան ուշանում ենք, խոչընդոտները դառնում են դժվար հաղթահարելի: Հենց նույն ճակատի պակասության պատճառով է, որ թուրք բարբարոսները տասնամյակներ, զուգե թե հարյուրամյակներ շարունակ իրականացնում են նաև մշակութային վանդալիզմ, մշակութային ցեղասպանություն:

Արևմտյան Հայաստանում 2538 եկեղեցիներից և 400 վանքերից մնացել են ընդամենը մի քանի հարյուր կիսաբաղն եկեղեցիներ:

Առաջադեմ մարդկությունը լուռն է (խիստ կասկածում են «առաջադեմ» բառի վրա), իսկ մշակութային վանդալիզմը շարունակվում է: Վերջին տարիներին Իսլամական պետություն կոչվածը (հովանավորվում է մեծ մասամբ Թուրքիայի կողմից) հողին հավասարեցրեց Մերձավոր Արևելքի պատմամշակութային հարյուրավոր կոթողներ, որոնք կրում էին հազարամյակների պատմության դրոշմը: Նույն այդ ժամանակներում ազերիները ոչնչացրին Ջուլայի հազարավոր խաչքարեր, նույն ազերիները այս օրերին էլ ոչնչացնում են Արցախի պատմամշակութային կոթողները, այն ամենը, ինչ հուշում է հայերի վաղնջական ներկայությունը տարածաշրջանում: Լռում է ՅՈՒՆԵՍԿՕ կոչվող կազմակերպությունը, լուռ է բովանդակ աշխարհը:

Ինչպես ցույց է տալիս աշխարհաքաղաքական իրադարձությունների բուռն, անկանխատեսելի զարգացումները, հայությունը վերստին կանգնած է ցեղասպանության վտանգի դեմ-դիմաց: Վերջին 100 տարիներին թուրքական յաթաղանը այնքան սարսափելի չէր կախվել մեր գլխավերևում, ինչպես հիմա: Նույնիսկ 2-րդ աշխարհամարտի տարիներին, երբ Հայաստանի սահմանին կուտակված էին տասնյակներով թուրքական դիվիզիաներ, իրավիճակը, այնուամենայնիվ, վերահսկելի էր, որովհետև մի պետության կազմում էին, որն աշխարհի քաղաքական երկու բևեռներից մեկին էր տիրում:

Որպես պահանջատեր հանդես գալը գրեթե միակ լծակն է թուրքական լկտի բարբարոս հայտայաց քաղաքականությունը ինչ-որ չափով խաթարելու, զսպելու համար: Հարցին կարելի է մոտենալ նաև այլ տեսանկյունից: Դրա համար յուրովի պատասխան են հետևյալ հարցին. ինչո՞ւ երևանյան փողոցներում թուրք-ադրբեյջանցիների, այսպես կոչված, բարիդրացիական հարաբերությունների հաստատման մասին հարցին բնակչության մի զգալի հատված անորոշ պատասխան է տալիս (դրանք բնավորությամբ ամեն ինչի նկատմամբ անտարբեր մարդիկ են), մի հատվածն էլ՝ նաև երիտասարդներ, խնդիր չի տեսնում: Սրանք էլ բոլոր նրանք են, ովքեր ծանոթ չեն թուրք-ադրբեյջանական վայրագություններին, որ դարերով ուղեկցում են մեզ: Հենց այդ վայրակներին ոչ խորությամբ ուսումնասիրությունն է, որ չի դառնում համոզմունք: Դրա հիմնական պատճառն էլ հետևյալն է. չնայած Ցեղասպանությունն արժարժող բազում փաստաթղթեր, աշխատություններ, գրքեր, վավերագրեր կան, սակայն դրանք հասու չեն հասարակ ժողովրդական զանգվածներին, դպրոցական ծրագրերում, դասագրքերում շատ քիչ ուսումնասիրվող նյութ կա, և մեր աշակերտները շատ քիչ բան գիտեն այդ մասին: Դրան նպաստում է նաև այն, որ առիթ-անառիթ է խոսվում այդ երբեք չսպիացող վերքի մասին:

Մինչդեռ հարևան Ադրբեյջանում նոր խոսել տվող բռնադատի բառապաշարում հայատյացության բառերն արդեն տոկոս են կազմում, իսկ դպրոցում այդ ամենը՝ ուսումնասիրության առարկա:

Վերջին ժամանակներս Հայոց ցեղասպանության հարցը ավելի քիչ է հայտնվում այս կամ այն պետության խորհրդարանի, պառլամենտի օրակարգում: Սա պետք է դիտարկել որպես հայկական դիվանագիտական կորպուսի պասիվության արդյունք, ինչպես նաև Հայաստանի իշխանությունների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների «բարելավման» հետևանք: Ես կավելացնեմ մի հանգամանք ևս. իշխանության են գալիս սերունդներ (նաև՝ Արևմուտքում), որոնք շատ քիչ բան գիտեն այդ ոճրագործությունների մասին, և ավելի քան հարյուր տարի առաջ տեղի ունեցած իրողություններին անդրադառնալը դառնում է ոչ առօրեական (հիմա ո՞վ է հիշում հայերի կոտորածները-Հիտլեր): Թուրքիան շարունակում է մեզ դիտարկել որպես զոհ հենց նրա համար, որ ներկայիս իշխանությունները չկարողացան ձևավորել մշակույթ Ցեղասպանության միջազգային ճանաչման հետագա պայքարի համար:

Մենք նույնիսկ չկարողացանք օգտագործել Ցեղասպանությունը հրապարակավ ընդունած թուրք մշակավոր գործիչների (գրողների, պատմաբանների, հրատարակիչների) ուժը՝ Թամեր Աբջան, Օրհան Փամուք, Էլիֆ Շաֆակ, Տուլջան Էրեն, Ռազմի Ջարաբոլան և հարյուրավոր այլ խիզախ անհատների, ովքեր չէին ուզում ապրել ստի ու կեղծիքի մեջ: Չկարողացանք ի նպաստ Ցեղասպանության ճանաչման օգտագործել Հրամտ Դիմքի թաղման օրը ծայր առած «Ես Դիմք եմ, ես հայ եմ» հանրային շարժումը, ինչպես նաև թուրք մտավորականների կողմից համազանց ստորագրահավաք կազմակերպվող Ցեղասպանության ճանաչման օգտին:

Եզակի կլինեն այն հայերը, ովքեր չեն եղել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում, նույնքան եզակի կլինեն նրանք, ովքեր գիտեն, թե ինչպես է կառուցվել և ինչ խորհուրդ ունի իր մեջ ամփոփած:

Համալիրը կառուցվել է ճարտարապետներ Ս. Քալաշյանի և Ա. Թարխանյանի՝ մրցություն հաղթած նախագծով: Քալաշյանը պատմում է, որ մտահոգմանը նպաստեց անցյալ դարի 60-ականների ազգային գաղափարախոսության զարթոնքը: Այդ գործում անուրանալի է Հիսուս Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Ջարուբյանի ներդրումը: Ցեղասպանության 50-ամյակի տարելիցի նշումը ժողովրդի ընդգնում էր, դա երկի թիվ մեկ ղեկավարի ջանքերի արդյունք էր, որը մինչ այդ բավականին նյութեր էր հավաքել Ցեղասպանության մասին և կարողացել Մոսկվայի հետ լեզու գտնել: Շինարարությունը սկսվել է 1965թ. սեպտեմբերին և տևել է 2 տարի: Այն համահայկական շինհարթակ էր առանց մամուլի կողմից լուսաբանման: Հուշահամալիրն իր մեջ ներառում է հայերի ջարդը, հուշը, վերածնունդը: Ձուկածների հոգին ամփոփված է տապանի տակ, այն ուղեկցվում է երաժշտությամբ: Բարձր աշտարակները խորհրդանշում են հայ ազգի վերածնունդը, դա ծիլն է, որ հողը պատռելով՝ դուրս էր եկել և արագորեն աճել: Աստիճանները արվել են այնպես, որ իջնելիս գլուխը խոնարհվում է քեզինց անկախ: 12 թեքված սյուները զուտ ճարտարապետական մտահոգացում են՝ առանց սիմվոլիկայի: Հուշակոթողի բացումը տեղի է ունեցել 1967թ.: Հայաստանն ուներ Կենտկոմի նոր քարտուղար: Նա՝ Ա. Քոչինյանը, անձամբ կազմակերպել է ամենար կրակի բերումը, և ջահն էլ ինքն է վառել, հանդես է եկել ճառով: Ապրիլի 24-ը համահայկական սգի ու վշտի, հոգում ամբարած վշտի պոթկման օր է հայտարարվում (նկարագրված է ըստ Քալաշյանի):

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը հայ ժողովրդի երբեք չսպիացող հավերժ արմատոր վերքի մարմնացումն է ի դեմս թուրք բարբարոսների, թուրք ոճրագործների՝ սեփական մեղքը չգիտակցելու, նաև մարդկության աչքի առաջ նոր արյունահեղություններ սանձազերծող պետության:

ԼԵՆՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ  
Գ. ԵՄԻՇՅԱՆ

ՈՂԵԿՈՉՈՒՄ

ՈՒՔՎԻՏԵՄ. ՀՈՒՆ-ՉԵՐԵԿՈՒՅՐ

ԱՅ ԿԳՄՍՆ կրթության պետական տեսչության տեսուչ, ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ Ռուբեն Օսիպովի նախաձեռնությամբ ռուսաց լեզվի ուսուցիչների կողմից համրապետությունում սկսվել է «Արցախում ապրում է»



խորագրով տասնօրյակ: Ապրիլի 22-ին Ստեփանակերտի երիտասարդության և մշակույթի պալատում տեղի ունեցավ «Ուքվիտեմ» հուշ-միջոցառումը՝ նվիրված Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված 44-օրյա պատերազմում զոհված Արցախի պաշտպանների հիշատակին: Այն կազմակերպել էր և անցկացրեց Ստեփանակերտի Ա. Դուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Քրիստինե Գրիգորյանը:

ենք անտարբերության, պատրաստ ենք դիմագրավել արտաքին բոլոր մարտահրավերներին, ինչպես և սահմանի վրա զսպել հակառակորդի ոտնձգությունները, քանզի հայի պայքարը կա ու կլինի, ու դրա համար ոչ լա-

պարի: Իսկ զոհվածների մայրերի ելույթները մեկ անգամ ևս ապացուցում են հերոսածին մայրերի անկոտրուն ոգին, որոնց կողքին ոչ մեկն իրավունք չունի հուսալքվելու: Մայրերը կոչ են անում սրբորեն պահել հայրենիքի համար զոհվածների հիշատակը, շարունակել նրանց սուրբ գործը, իրագործել նրանց երազանքներն ազատ Արցախում:

Հերոս զավակ ծնած մայրը նույնպես հերոս է. «Ես 93-ի փոթորկված Արցախի հպարտ հայուհին եմ, որի որդու առաջին ճիչը մխրճվեց թշնամու երախը: Ես հպարտ էի ու երջանիկ. մեր զավակների շուրթերն աշխարհին ավետում էին Արցախի հավերժությունը: Երջանկությունս փշուր-փշուր եղավ, հպարտությունս կոխկոտեցին: Այսօր, երբ այցելում եմ նրանց այնտեղ՝ Արցախի մի մասունք դարձած Եռաբլուր, երկինք համբարձվող դրոշմների հառաչանքը խլացնում է հոգսս, իսկ երկրի վրա հույսով ու հավա-

արյամբ, թույլ չտաք, որ պղծվի, մեր որդիները երազանքների օրրանը որբ ու անտեր չթողնեք, ինձանից, ձեզանից, մեր զավակներից խլված երջանկությունը փորձեք վերադարձնել: Հարյուր հազարավոր քաջորդիների ազատ ու անկախ Արցախի խորհրդանիշը երբեք ոչ մեկի առաջ այլևս չպետք է խոնարհվի»,- ելույթ ունենալով՝ ասաց հերոս Հարութ Պետրոսյանի մայր Անահիտ Պետրոսյանը:

Իսկ Մարինե Սարգսյանն ասաց, որ իր միևնույն որդին՝ Յակով Սարգսյանը, ԱԱԾ-ի լեյտենանտ, հազարավոր հայրենասերների պես հերոսաբար զոհվեց. «Իմ որդու դեմքին երբեք չէր լքում ժպիտը, իսկ ինչքան եմ նրանք, ինչպիսին Յաշկան է: Եվ բոլոր այդ քաջ պաշտպանները զոհվել են: Նրանք պետք է երջանիկ ապրեն այս հողի վրա, զբաղվեն սիրած գործով: Մենք սպասում ենք արդար վերժխնդրության, դրանով ապրում են հազարավոր մայրեր, նաև՝ ես: Արցախը պետք է ապրի, մենք չենք ուզում նորից տեսնել ուրիշ մայրերի կրոստի սարսափը, այստեղ պետք է ապրեն առողջ, երջանիկ ընտանիքներ: Արցախի մանուկների ուրախ դեմքերին ես ուզում եմ տեսնել իմ միակ որդու ժպիտը»:



ցել է պետք, ոչ էլ հուսալքվել: Անտարբեր աշխարհին մենք կարող ենք միմիայն պատասխանել, որ կոհիմագրավենք բոլոր փորձություններին, քանզի Արցախը հայոց սիրտն է մշտավառ, որտեղ ամեն մի քար հասցե է ու գիր»:

Հայրենասիրական բանաստեղծությունների արտասանությամբ, երգերով ու պարերով հանդես եկան հ. 2 դպրոցի, Սայթ-Նովայի անվան երաժշտական, պարարվեստի քոլեջների սաները, Ը. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի երգչախումբը: Ներկայանալով նոր շնչառություն հաղորդեց ՀՀ վաստակավոր արտիստ, երգչուհի Հուշան Պետրոսյանի ոգեշունչ կատարումը: Առանց խեղդող հուզմունքի անհնար էր ունկնդրել Արցախի մաքառումն արտացոլող ուսուցչուհու, երեխաների, մշակույթի ներկայացուցիչների ելույթները, որոնք մեկ բան են պատգամում՝ Արցախն ապրում է, Արցախը պետք է

տով ժպտացող աչքերը շանթահարում են կուրծքս: Աղերսում եմ, որ մերեն մեզ, մերեն մի բանի համար, ինչի համար ենք ինքներս երբեք մերել չենք կարող: Այսօր իմ խոսքը այլ ընթացք պետք է ունենա, բայց նայում եմ ձեզ և ուզում եմ խնդրել իմ անունից և Արցախի երկնքում սավառող հազարավոր անմեղ հրեշտակների անունից, որ այս մի բուռ սուրբ մշխարը, որ այլևս լոկ հայրենիք չէ, այլ մեռունված է մեր զավակների մաքրամաքուր, անմեղ

Միջոցառումը մեկնարկեց ԱՅ օրհներգով: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին Արցախի պաշտպանության համար իրենց կյանքը զոհաբերած հայորդիների հիշատակը: Դպրոցականները շարքով դափնի ղուրս բերեցին ծաղիկներով զանր-յուղները՝ տեղադրելու Ազատամարտիկների պուրակում 44-օրյա պատերազմում զոհվածների հուշապատին:

Երեկոն բացեց ԱՅ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը. «Պատմության յուրաքանչյուր փուլում ամեն սերնդի բաժին է ընկնում իր ճակատագիրը, և յուրաքանչյուրը կամա թե ակամա ընդունում է իրեն նետած մարտահրավերները: Մեր հայրենիքը, մեր Արցախ աշխարհը պահպանելու, նոր սերնդին փոխանցելու համար մեզ բաժին հասան ծանրագույն փորձություններ: Արցախում ծնված, Արցախից սերած սերունդը կարողացավ իր հայրենասիրությամբ և նվիրումով հակազդել թշնամու բանակին ու նրա իսկա սպառազինությանը և փրկել մեր հայրենիքի մի փոքրիկ հատվածը միայն: Մեր հայրենիքում հայրենասիրական ոգին քարերի ժայռեղեն լեզվից է սերում, ու չնայած մեր ծայերը կորչում են անտարբերության լուռ քարանձավներում ու հորձանուտներում, չնայած մենք մատնված

«ԱՊՐԵԼ, ԱՊՐԵԼ, ԱՊՐԵԼ»

Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ. 1 հիմնական դպրոցի ուսաց լեզվի ուսուցիչների ձեռնարկմամբ ապրիլի 25-ին այստեղ անցկացվեց «Արցախն ապրում է» խորագրով միջոցառում: Ներկա էին ԱՅ ԿԳՄՍՆ և Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ աշխատակիցներ, դպրոցների ռուսաց լեզվի ուսուցիչներ, երախտավոր մանկավարժներ, այլք:

անեծք պատերազմին, օրհնյալ լինի խաղաղությունը, վասն հայրենյաց կյանքը նվիրաբերածը՝ հավերժ կենդանի, հայրենիքից վե՛ր՝ չկա ոչինչ առավել, ապրել և արարել հայրենիքի համար... Որքան որ միջոցառումը 44-օրյա

կտոր մնացած լինի, և Աստված մի արասցե, եթե կորցնենք այն, կկորցնենք ինքներս մեզ, պարզապես մենք պետք է սովորենք ապրել մեկ այլ ձևով: Միջոցառմանը կարմիր թելի պես անցնում էր «Ապրել, ապրել, ապ-

րա են հրամայում ընկածները: Դպրոցի ռուսաց լեզվի և գրականության մեթոդավորման նախագահ Լիլիթ Հարությունյան ասաց, որ ոգեկոչումը ամենափոքր բանն է, որ կարող են անել հանուն հայրենիքի ընկածների համար, բայց նաև հասկանում են, որ ինչքան նրանց հիշում ենք, նրանք ողջ են: Նաև իր երախտագիտությունը հայտնեց «Արցախն ապրում է» տասնօրյակի նախաձեռնող նախարարության

պես թիմ և բացահայտել իրենց ներուժը: Ռ. Օսիպովը, նաև որպես ռուսերենի ուսուցիչ, իր հիացմունքն արտահայտեց բարձր մակարդակով կազմակերպված միջոցառման, երեխաների՝ անթերի ռուսերենի արտասանության համար: Նա մեջբերեց Արցախի մեծ բարեկամ Կիմ Բակչիի խոսքը, որի հետ նա տարիներ առաջ շրջագայել էր Արցախում. «Անհնար է հաղթել մի ժողովրդի,



պատերազմում մեր կրոստի ու ցավի մասին էր, նույնքան էլ՝ ապագայի, թե ինչպես պիտի պահենք սուրբ մշխար դարձած մեր մի բուռ երկիրը սիրով, միաբանությամբ՝ ապրելով մեր հողում, և յուրաքանչյուրն իրենից կախվածն անելով՝ ամուր պահելով այն: Ապրելու ուժ տալիս է մեր հողը, ինչքան էլ նրանից փոքր

րել»՝ մեր գոյատևման գլխավոր պայմանի գաղափարը: Եվ դա հինջեցնող մատաղ սերունդն է: Մեծերին կյանքի կոչողը, հույս տվողը երեխաներն են՝ երկրի ծիլը: Լսելով նրանց՝ ծանր քարն ընկնում է մեր սրտից, ուրեմն ամեն ինչ կորած չէ, պետք է ծնկած տեղից բարձրանանք ու շարունակենք մեր երթը:



պետական տեսուչ և ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ Ռուբեն Օսիպովին, որն օգնում է առարկայի մասնագետներին միավորվել որ-

որն ապրում է իր հողում և պատրաստ է մեռնել այդ հողի համար»:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՎՈՒ

ԴՊՐՈՑԻՑ ԴԵՊԻ ՏԻՉԵՐԸ

Բյուրականի աստղադիտարանն արդեն 8 տարի է՝ իրականացնում է «Կարոցից դեպի տիեզերք» ծրագիրը Հայաստանի և Արցախի դպրոցներում: Աստղագետներ են այցելում դպրոցներ, աշակերտների և ուսուցիչների համար զրույց-դասախոսություններ անցկացնում, աստղագիտական նյութեր, գրականություն բաժանում երեխաներին, ընդ որում, նախապատվությունը տալիս են հեռավոր և սահմանամերձ գյուղերին, քանի որ գյուղաբնակ երեխաները, ունենալով ավելի մեծ պոտենցիալ, հաճախ գրկված են հետագա աճի հնարավորություններից: Բյուրականցիներն ունեն առաքելություն՝ ի հայտ բերել տաղանդավոր, օժտված երեխաներին, որոնց հետ կապ պահպանելով՝ հրավիրում են Բյուրականում անցկացվող միջոցառումներին՝ աստղագիտական ճամբարներ, օլիմպիադաներ: Ինչպես արդեն տեղեկացրել ենք «Լուսարար»-ի անցած համարներում, Բյուրականի աստղադիտարանի և Արցախի գիտական կենտրոնի միջև անցյալ տարվա հոկտեմբերին կնքվել է համագործակցության հուշագիր, ըստ որի՝ հասակեցվել են դպրոցների հետ տարվող աշխատանքները: Արցախի գիտական կենտրոնում Բյուրականի աստղադիտարանը ստեղծել է աստղագիտական լաբորատորիա:

Ապրիլի սկզբին Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը հերթական այցն է կատարել Արցախ: Արցախի գիտական կենտրոնի տնօրեն Անյուտա Սարգսյանի և աշխատակիցների հետ միասին հան-

դիպումներ են եղել Ստեփանակերտում՝ Հաղուրթի և Շուշիի ու շրջանների մի շարք դպրոցներում:

Բյուրականի աստղադիտարանը, ՀՀ առաջատար գիտական հիմնարկ լինելուց բացի, նաև մեծ թվով կրթական և հանրային միջոցառումներ է անցկացնում:



«Ես շատ հիացած եմ Արցախի երեխաներով և մեր պարտքն էմ համարում աստղագետներ պատրաստել Արցախի համար (ներառյալ ԱրՊՀ-ն ավարտած մեկ հոգի Բյուրականում վերանասնագիտանում է որպես աստղագետ), և որ այստեղ աստղագիտությունը՝ որպես գիտություն, գոյություն ունենա», - ասում է Ա. Միքայելյանը:

Աստղադիտարանի տնօրենը դա շատ կարևոր է համարում ոչ միայն աստղագիտական հետազոտություններ կազմակերպելու կամ աստղադիտարան ունենալու տեսանկ-

յունից, այլև որպեսզի Արցախը մտնի միջազգային աստղագիտական հանրության մեջ, և միջազգային աստղագիտական հանրությունը ճանաչի Արցախին:

Հասկանալի է, որ միանգամից հնարավոր չէ միջազգային մակարդակի հասնել, բայց այդ հանրությանը ինտեգրվելը շատ մեծ քայլ է նաև քաղաքական տեսակետից, քանի որ եթե դիվանագետները, քաղաքական գործիչները չեն կարողանում Արցախի հետ կապված որևէ լուրջ հարց լուծել, ապա գիտության մեջ և մշակութային տարբեր ոլորտներում դա ավելի հեշտ կարելի է անել: Միջազգային հանրության կողմից այս ոլորտներում Արցախի ճանաչումը կարող է նաև քաղաքական ձևակերպման հիմք լինել: «Չուցես երկար գործընթաց է, բայց ես շատ լավատես եմ, պետք է այդպիսի քայլեր անել, որպեսզի մենք մեր ուղղությամբ մեր ցանկալի նպատակին հասնենք», - այս կարծիքին է Ա. Միքայելյանը:

Արցախի դպրոցականների համար իրականացվող միջոցառումներից մեկը աստղագիտական ճամբարներն են: Ա. Միքայելյանն ասաց, որ անցյալ տարի այդ ճամբարի 30 մասնակիցներից 9-ը Արցախից էին: Վիկտոր Համբարձումյանի թոռները, որոնք Մոսկվայում են ապրում և հայտնի մաթեմատիկոսներ են՝ Գալինա Պահման և Նրա ամուսինը՝ Իվան Պահմանը, իրեն խնդրել էին Բյուրականում կազմակերպել աստղագիտական ճամբար հատուկ Արցախի դպրոցականների համար: Այս տարի էլ նույնը կրկնվելու է. հունիսի 19-29-ը կազմա-

կերպվի երկրորդ մասն ճամբարը: Բացի համատեղ աստղագիտական ճամբարից, որտեղ Հայաստանի մյուս դպրոցականների հետ կլինեն նաև արցախցիներ, հատուկ արցախցիների համար ճամբար էլ կկազմակերպվի և ավելի շատ մասնակիցներ կունենա: Այնպես որ, ժամանակ կա, հետաքրքրվողները կարող են կապ պահել Բյուրականի աստղադիտարանի հետ և համապատասխան աշխատանքներից հետո ներգրավվել ճամբարում: Ի դեպ, այս մասին նաև ԱՀ ԿԳՄՍՆ-ն է հայտարարություն տարածել:

Այսօր աստղագիտությունը ներկայանում է որպես շատ գիտությունների հիմք, քանի որ տիեզերական բոլոր հետազոտությունները հիմնված են երկնային մեխանիկայի օրենքների վրա: Հիմնա մենք ինչի վերևից են հետևում և՛ շատ մեծ ճշգրտությամբ: Իսկ տիեզերքից իմանում են ամեն ինչ՝ պատմական իրադարձությունների ժամանակը, տեղը, հնագիտական ճշգրտումներ կատարում, ուսումնասիրում հողերի որակը, ռազմական հետախուզություն կատարում, քարտեզագրում անում, կենդանաբանություն, օդերևութաբանություն, օվկիանոսագիտություն և այլն, և այլն:

Այնպես որ, թող այն թյուր կարծիքը չստեղծվի, թե աստղագիտություն սովորում են լոկ տիեզերագնաց դառնալու համար: Իհարկե, շատ լավ կլինի, որ մենք ունենանք մեր տիեզերագնացը, բայց առայժմ գլխավոր նպատակը դպրոցականներին, երիտասարդներին դեպի աստղագիտություն ուղղորդելով նրանց դեպի գիտություն բերելն է, որը մեր սահմանափակ ռեսուրսների պայմաններում անվտանգության գլխավոր երաշխիքն է:

Ս. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

ՆՊԱՏԱԿԸ՝ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐՉԱՆՈՒՄ, ԱՐԱԳ ԼՈՒՇՄԱՆ ՀԱՄԱՐ՝ ՄԱՏՈՒՅՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ



Օրերս Արցախի պետական համալսարանում անցկացվեց «Արրի պայմաններում կրթության ոլորտում հոգեբանական աշխատանքի առաջնահերթ ուղղությունները» թեմայով գիտագործնական կոնֆերանս, որին մասնակցում էին դասախոսներ, հոգեբաններ, դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ:

Կոնֆերանսին հրավիրված էին ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, նախագահի կրթության գծով խորհրդակցանքեր Արմեն Սարգսյանը, Լուսինե Ղարախանյանը, որոնք ողջունելով այդ թեմայով կոնֆերանսը՝ կարևորեցին նման գիտական աշխատանքները կրթական հիմնախնդիրների վերհանման և դրանց լուծման գործում:

Ինչպես տեղեկացրեց ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, 44-օրյա պատերազմից հետո Արցախի բոլոր կրթական հաստատությունները կանգնեցին նոր մարտահրավերների առջև, քանի որ խաթարվեց ուսումնական գործընթացի օրինաչափ բնույթը: Ծանր էր իրավիճակը նաև մեկ այլ առումով. դասախոսները, ուսանողները գտնվում էին հոգեբանական ծանր վիճակում: ԱրՊՀ ղեկավարությունը նախաձեռնեց և

կարծ ժամանակում անցկացրեց բազմաթիվ խորհրդակցություններ, որոնց ներգրավվեցին նաև ռուսական խաղաղապահ ուժերի հոգեբանական խմբերը: Կազմակերպվել է այդպիսի շուրջ 30 հանդիպում, ընդ որում, խաղաղապահ ուժերի հոգեբանները ներկայացել են երկու խմբով, որոնցից մեկն աշխատում էր ուսանողների և աշխատակիցների հետ, իսկ մյուս խումբը մասնագիտական աշխատանքներ էր տանում հոգեբան դասախոսների և մագիստրոսների հետ, որպեսզի նրանք կարողանան բնակչության շրջանում կատարեն հոգեբանական աշխատանքներ: Իսկ մայիս ամսին կազմակերպվել է գիտագործնական կոնֆերանս՝ ԵՊՀ և Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի հոգեբանության ամբիոնների առաջնակարգ մասնագետների մասնակցությամբ: Այդ աշխատանքները շարունակական բնույթ են կրում և օրվա գիտագործնական կոնֆերանսն էլ դրանց բաղկացուցիչ մասն էր:

ԱՀ նախագահի խորհրդակցական Սարգսյանի փաստարկմամբ՝ կրթական ասպարեզում այսօր աշխարհում կան մեծաթիվ հոգեբանական ծառայություններ և ուղղություններ ու մեթոդների բազմազան ձևեր, որոնք կարողանում են իրենց երկրի առջև դրված խնդիրները լուծել: Երկրները հսկայական գումարներ են ծախսում մանկավարժ պատերազմից հետո հոգեբանական ծառայությունների մատուցման վրա, որպեսզի հետպատերազմային սիմպոնի կարողանան հանել բնակչության միջից: Բայց դրանցից ոչ մեկը երկի չունի այն առանձնահատկությունը, որն ունի մեր երկիրը, որտեղ իրավիճակն այսպիսին է: 37 տարեկան երիտասարդը երեք անգամ պատերազմ է տեսել և առնվազն մեկ

անգամ պատերազմական իրավիճակում ծառայել բանակում: Շատերի համար դա կարող է շոկային իրավիճակ լինել, բայց ոչ արցախցու դեպքում, որը շարունակում է բնականոն առօրյայով ապրել, հոգեբանական ոչ այնքան մեծ ծառայությունների առկայության պայմաններում հաղթահարել հետպատերազմյան սիմպոնի:

Հասկանալի է, թե ինչպիսին կարող է լինել ուսանողների սոցիալ-հոգեբանական խնդիրների ազդեցությունը կրթության արդյունավետության վրա, երբ նրանց մեծ մասը կամ տեղահանված է և ապրում է ոչ բարվոք պայմաններում, կամ ունի զոհված հարազատներ, կուրսը կտրել է, կամ հենց իրենք են պատերազմի հաշմանդամներ, ինչպես բացատրեց ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շահեն Այդինյանը: Սրան գումարած՝ տեղեկատվական ահռելի հոսքերը, որոնք նույնպես հոգեբանական ծնշման մեխանիզմներ են և մեծ դժվարություններ են ստեղծում հոգեբանական աշխատանքների ճանապարհին: Գիտագործնական կոնֆերանսի ավարտին այն կազմակերպող՝ ԱրՊՀ պրոռեկտոր Վիտյա ՅԱՐԱՄԻՇՅԱՆԻ հետ փորձեցինք ամփոփել որոշ արդյունքներ:

- Նախ մի քանի եզրահանգումներ արեցինք: Առաջինն այն է, որ աշխատանքողվի գիտագործնական ձևաչափն առավել արդյունավետ է, քան զուտ ակադեմիական գիտաժողովները: Երբ հավաքվում են միայն տեսական քննարկումներ և միայն գիտական ձեռքբերումներ ներկայացնելու, սովորաբար դրանով էլ ավարտվում են: Բայց երբ գիտագործնական ուղղվածություն է ունենում, հնարավոր է դառնում խնդիրներն արագ բացահայտել, քննարկել և բերել ինչ-որ լուծումների հարթու-

թյուն: Երկրորդ կարևոր եզրահանգումն այն էր, որ բուհը և կրթության համակարգի մյուս օղակները երբ միմյանցից տարանջատված են աշխատում, դատապարտված են անհաջողության: Ինչպես մարմնի տարբեր օրգանները, այնպես էլ կրթության բոլոր օղակները պետք է փոխգործակցեն, և այդ համագործակցությունը պետք է միտված լինի նրան, որ ի վերջո խզվի այն արատավոր փակ շրջանը, երբ բուհը մեղադրում է դպրոցին, դպրոցը՝ բուհին և անընդհատ արդարացումների տեղիք է տրվում:

- Այդ եզրահանգումները մանկավարժական առումով են, իսկ զուտ հոգեբանական՝: Այսպես տարի համալսարանը հոգեբաններ է թողալու, բայց չունենք բավարար քանակով գործնական հոգեբաններ: Պատճառաբանում են, որ աշխատաշուկա չկա, պահանջարկ չկա: Բայց, ցավոք, պատերազմը ստեղծել է հոգեբանական աշխատանքի լայն դաշտ...:

- Շուկան պահանջարկը ձևավորեց, բայց պահանջարկն այնքան մեծ է, որ ինչպես բանաստեղծն է ասում՝ մենք դարդի մեջ՝ չզիտեինք դարդն ինչ է, որովհետև չենք էլ ուզում լուսաբանել, բացահայտել այն խնդիրները, որոնք կողքից այնքան շատ են երևում: Դրսից եկած մասնագետները՝ «Բժիշկներ առանց սահմանի», Կարմիր խաչի մասնագետներ, ռուսական խաղապահ ուժերի հոգեբաններ և այլք, այդ հարցերին ավելի շատ են ուշադրություն դարձնում: Փաստացի գործնական մասնագետների պահանջարկը շատ մեծ է: Պետք է մեր ուժերն ու հնարավորությունները մոբիլիզացնենք, այստեղ մասնագետներ պատրաստելու համար հատկացվող ժամանակն առավել արդյունավետ դարձ-

նենք, որպեսզի բուհի շրջանավարտը իր դիպլոմի հետ միասին ունենա նաև անցաթուղք պրակտիկ հոգեբանական դաշտում ներգրավվելու համար:

- 44-օրյա պատերազմի ավարտման արդեն երկրորդ տարին է լրանում, առաջ էլ խոսում էին հոգեբանական աջակցման կենտրոններ ստեղծելու մասին, բայց, կարծես ուշանում է:

- Դա կառավարական ծրագիր է այժմ դարձել և իրականացվում է ոչ թե կենտրոնից դեպի ծայրամասերը, այլ հակառակ ուղղությամբ. հոգեբանական աջակցման կենտրոն արդեն բացվել է Մարտունիում և այնտեղ մասնագիտական խումբ է աշխատում: Այդ, պետք է բացվեն կենտրոններ, պետք է համագործակցել, պետք է ֆինանս ծախսել, որովհետև այդ ֆինանսը այսօր ով խնայում է, վաղը կրկնակի է վճարելու: Ցավոք, մեր հոգեբանական աշխատանքի մի ղեկավարությունն էլ այն է, որ սպասում ենք խնդիրը հայտնվի, նոր այն ինչ-որ կերպ լուծել, իսկ մինչ այդ հայտնվում է մեկ ուրիշ խնդիր, որը պետք է կրկին ուսումնասիրել և գնալ դրա լուծման հետքերով: Դա պաշտպանողական մարտավարություն է, և իհարկե, հաղթանակի բերել չի կարող: Հոգեբանությունը պետք է փորձի կանխատեսել այն իրավիճակները, որոնք կարող են լինել, իսկ դրա համար մոդելներ պետք է մշակել: Պատերազմը արհավիրք է, կործանարար և դաժան մի իրողություն է, և մենք պետք է որոշակի միջոցառումներ և համակարգ մշակենք, որ Աստված մի արանցե, կրկնվելու դեպքում կարողանանք կիրառել արդեն իսկ մշակված մոդելները:

Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ



ՈՒԺԵՂ, ՃԱՐՊԻԿ, ԽԵԼԱՑԻ

2022-ի «ԱՐԵՎԻԿ»-ՆԵՐԸ

Ապրիլի 19-21-ը անցկացվեց 2021-2022 ուստարում ԱՀ հանրակրթական դպրոցների 10-12-րդ դասարանների միջև «Արծվիկ» ռազմամարզական խաղերի մրցումների համարապետական փուլը: Ն գործառնասում տեղի ունեցած հանդիսավոր հավաքին ներկա էին ԱՀ ԿԳՄՍՆ, ՊՆ, ՀԿ-ների ներկայացուցիչներ, հյուրեր, ազատամարտիկներ: Ներկաները ծաղիկներ խոնարհեցին սպարապետ Վազգեն Սարգսյանի հուշարձանին: Կատարվեց ԱՀ օրհներգը:

Բացման խոսքով հանդես եկավ ԱՀ ԿԳՄՍՆ նախագորակոչային պատրաստության և արտադպրոցական ծրագրերի վարչության ՆՁՊ բաժնի վարիչ Դավիթ Օհանջանյանը. «Այս տարի «Արծվիկ» ռազմամարզական խաղերն ունեն այլ առանձնահատկություն ու խորհուրդ: Այն կոչված է հայրենասիրության բազմապատկման, հետպատերազմյան ծանր շրջանը միասնական ուժերով հաղթահարելու գաղափարին»: Ինչպես նա ասաց, պատմությունը վկայում է, որ հաղթանակն ու պարտությունը զուգահեռ են. երբեմն ճակատամարտում պարտվելով՝ ազգը պատերազմում հաղթելու նոր միջոց է գտնում, և վստահ է, որ հանձին պատանի զինվորների նոր սերնդի, արցախցին դեռ հաղթանակներ է կռելու:

Ողջույնի խոսք ասաց ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը. «Մեր պետության համար այս ծանր պայմաններում մեր ժողովրդի կարևոր հաղթաթուղթն այնպիսի սերունդ դաստիարակելն ու կրթելն է, որն ի վիճակի է կերտելու ներկան ու ապահովագրելու մեր լուսավոր ապագան: Ազատությունը, անկախությունը, առավել ևս պետականությունը որպես նվեր չեն ստանում, այլ նվաճում են: Մենք պետք է ունակ լինենք կերտելու այնպիսի սերունդ, որը պատրաստ է արժանապատիվ պատմություն ստեղծելու, ինչին էլ ուղղված են նաև «Արծվիկ» ռազմամարզական խաղերը»:

«Արծվիկ»-ցիներին հաջողություններ մաղթեցին ԱՀ ՊԲ հրամանատարի տեղակալ Նորայր Մկրտչյանը, «Արցախի պահեստազորի սպաների միություն» ՀԿ աշխատակազմի կազմակերպիչ Շիրակ Զաքարյանը:

Մրցումներին մասնակցեցին Ստեփանակերտ քաղաքը ներկայացնող՝ հ. 8, Մարտակերտի շրջանը՝ Վանքի, Մարտունու՝ Հերիերի, Ասկերանի՝ շրջենտորոնի էր. Բարսեղյանի անվան, Շուշիի՝ Խ. Աբովյանի անվան դպրոց-

ների ջոկերը: Եռօրյա մրցումներում ջոկերն իրենց ուժերը փորձեցին ինքնաձիգի ոչ լրիվ քանդում-հավաքում, պահեստատուփի լիցքավորում, ֆիզպատրաստություն, շարային պատրաստություն, քաղաշտպանություն, գործնական հրաձգություն, նռնակի նետում, վազք մրցածներից: Առաջին պատվավոր տեղն զբաղեցրեց Ստեփանակերտի հ. 8 միջնակարգ /հոսքային դպրոցի ջոկը, 2-րդ տեղը՝ Մարտակերտի շրջանի Վանքի, 3-րդ տեղը՝ Ասկերանի միջնակարգ դպրոցների ջոկերը:



Բոլոր մրցածների ընդհանուր արդյունքներով 1-ին տեղն զբաղեցրեց Սվետլանա Մովսիսյանը (Ստեփանակերտի հ. 8 դպրոց): Ի դեպ, նա օկուպացված Ասկերանի շրջանի Մաղաթաշեն գյուղից է: Մեզ հետ զրույցում ասաց, որ նախասիրությունը մարքեթինգն է, բայց սիրում է նաև ռազմական գործը, զբաղվում է կարատեով. «Դա բոլորին է պետք: Ուժեղ և պատրաստված պետք է լինեն նաև աղջիկները: Մենք հանձնվելու իրավունք չունենք»: Նույն դպրոցից 2-րդ տեղը գրաված Անգելինա Տոնյանը օկուպացված Հաղորոթի շրջանի Դախսիկ գյուղից է: Նա էլ որոշել է ուսումը շարունակել ռազմական ուղղությամբ:



3-րդ տեղն զբաղեցրել է Ասկերանի միջնակարգ դպրոցի աշակերտ Արսեն Եղիայանը:

Հրաձգության մրցումներում հաղթող է ճանաչվել Շուշիի Խ. Աբովյանի անվան դպրոցի աշակերտ Մոնթե Դարախանյանը, որը քա-



րին տակից է: Մի քանի ամիս առաջ օդամղիչ հրացանից կայացած հրաձգության մրցումներում նա դարձյալ 1-ին տեղում էր:

Լավագույն ջոկի հրամանատար ճանաչված և ինքնաձիգի ոչ լրիվ քանդում-հավաքում և պահեստատուփի լիցքավորում մրցածում հաղթած՝ հ. 8 դպրոցը ներկայացնող Մովսես Հովսեփյանը Հաղորոթից է, որոշել է ուսումը շարունակել ռազմական գծով:

Ֆիզիկական պատրաստություն մրցածում հաղթել է Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտ Մարատ Իսրայելյանը:

Շարային պատրաստությունից և քաղաքացիական պաշտպանությունից լավագույն են Լարիսա Վարդանյանը և Արսեն Համբարձումյանը՝ Մարտունու շրջանի Հերիերի միջնակարգ դպրոցից: Այս կրթօջայի ջոկը 3-րդ տեղն է զբաղեցրել քաղաշտպանությունից:

44-օրյա պատերազմը նոր սերնդի մեջ ոչ թե ընկճվածություն, այլ ուժեղանալու և հաղթելու մեծ ձգտում է առաջացրել:

Հավատանք ապագային:

Մրցանակային տեղեր գրաված ջոկերը և անդամներն ու մարզիչները պարգևատրվեցին ԱՀ ԿԳՄՍՆ պատվոգրերով, դրամական պարգևով, արժեքավոր նվերներով: Պարգևատրումներ եղան նաև ԱՀ ՊՆ, ՆԳՆ արտակարգ իրավիճակների պետական ծա-

ռայության, Արցախի ազատամարտիկների միություն, «Արցախի պահեստազորի սպաների միություն» ՀԿ-ների կողմից:

Պարգևատրվեցին նաև անհատական հաշվարկով մրցանակային տեղեր գրաված մասնակիցները:

«ԶՈՐԱՅ ԱԿՈՒՄԲ». ՌԱԶՄԱՆԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԿ ՀԱՐԹԱԿ



Անցած տարվա դեկտեմբերին Արցախում ստեղծվեց «Զորաց ակումբ» հասարակական կազմակերպությունը: Խնդիրների և նպատակների շուրջ «Լուսարար»-ը գրուցեց նրա նախագահ Դավիթ ՕՂՆՆԱՅՆՅԱՆԻ հետ, որը նաև ԱՀ ԿԳՄՍՆ նախագորակոչային պատրաստության և արտադպրոցական ծրագրերի վարչության ՆՁՊ բաժնի վարիչն է:

- Զորաց ակումբ»-ը ստեղծվել է Արցախի հերոս Արթուր Աղաբեկյանի մտահղացմամբ և կրթական գերատեսչության պատասխանատուների, դպրոցների զինղեկների և շահագրգիռ այլ անձանց նախաձեռնությամբ: Նպատակը դպրոցահասակ երեխաների մեջ հետաքրքրություն և սեր առաջացնելն է ռազմական գործի և զենքի համոզեց, նրանց նախապատրաստել հայրենիքի պաշտպանությանը, բարձրացնել պաշտպանման աստիճանը խմբակների արդյունավետությունը: Մի խոսքով՝ մեր հայրենիքի համար ձևավորել պիտանի քաղաքացիներ:

Մրցանակային տեղեր գրաված ջոկերը և անդամներն ու մարզիչները պարգևատրվեցին ԱՀ ԿԳՄՍՆ պատվոգրերով, դրամական պարգևով, արժեքավոր նվերներով: Պարգևատրումներ եղան նաև ԱՀ ՊՆ, ՆԳՆ արտակարգ իրավիճակների պետական ծա-

ռայության, Արցախի ազատամարտիկների միություն, «Արցախի պահեստազորի սպաների միություն» ՀԿ-ների կողմից: Պարգևատրվեցին նաև անհատական հաշվարկով մրցանակային տեղեր գրաված մասնակիցները:

- Ովքե՞ր կարող են ընդգրկվել «Զորաց ակումբ»-ում:  
- Նախնական զինվորական պատրաստություն ուսումնասիրող քաղաքացիները, այսինքն՝ ուսումնական հաստատությունների 12-18 տարեկան սովորողները, մանկավարժները, հարակից մասնագիտություններով աշխատողները՝ ինչպես Արցախի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներ: ՆՁՊ առարկան դպրոցում հիմն ուսումնասիրում են 8-րդ դասարանից, բայց քննարկվում է 7-րդից սկսելու նպատակահարմարությունը:


- Զեր մատնանշած նպատակները մտնում են նաև ՆՁՊ առարկայի գործառնությունների մեջ: Արդյո՞ք այն բավարար պատրաստվածություն չի տալիս պատանիներին, թե՞ նաև լրացուցիչ խթանի անհրաժեշտություն կա:  
- Մեր կազմակերպության նպատակներն ու խնդիրները շատ մոտ են ԿԳՄՍՆ համապատասխան բաժնի խնդիրներին ու նպատակներին: Այդ իսկ պատճառով մեր բոլոր միջոցառումները կանցկացվեն համատեղ: Ավելի ճիշտ կլինի ասել, որ «Զորաց ակումբ»-ը լրացուցիչ խթանում է Նախագորակոչային պատրաստության բաժնի աշխատանքները: Արցախի ուսումնական հաստատություններում ՆՁՊ առարկան պատշաճ մակարդակի վրա է: Դրա մի վկայությունն է, որ Արցախի ՊԲ զորակոչված պատանիները զենքի հետ վարվելու, միմյանց հետ հարաբերվելու հիմնականում բավարար պատրաստվածություն ունեն, հեշտ են հարմարվում բանակային վարքականոցներին: Բայց լրացուցիչ միջոցառումները ավելորդ չեն լինի այդ անձանց ավելի բարձր մակարդակի վրա դնելու համար:

ըլ կանցկացվեն համատեղ: Ավելի ճիշտ կլինի ասել, որ «Զորաց ակումբ»-ը լրացուցիչ խթանում է Նախագորակոչային պատրաստության բաժնի աշխատանքները: Արցախի ուսումնական հաստատություններում ՆՁՊ առարկան պատշաճ մակարդակի վրա է: Դրա մի վկայությունն է, որ Արցախի ՊԲ զորակոչված պատանիները զենքի հետ վարվելու, միմյանց հետ հարաբերվելու հիմնականում բավարար պատրաստվածություն ունեն, հեշտ են հարմարվում բանակային վարքականոցներին: Բայց լրացուցիչ միջոցառումները ավելորդ չեն լինի այդ անձանց ավելի բարձր մակարդակի վրա դնելու համար:

- Կազմակերպության անդամ դառնալու համար սեռը նշանակություն ունի՞:  
- Բնավ՝ ոչ: Ռազմամարզական տարբեր միջոցառումներում դուք ականատես կլինեք, թե ինչ հաճույքով են աղջիկները մասնակցում և ինչ հաջողություններ հասնում:

- Մի փոքր կմանրամասնե՞ք ակումբի ծրագրերը:  
- Մեկ միջոցառում արդեն անց ենք կացրել

մեկ ամիս առաջ ԱՀ ԿԳՄՍՆ-ի հետ համատեղ՝ հրաձգության մրցույթ՝ օդամղիչ հրացանից Ստեփանակերտի հանրակրթական 13 դպրոցների, միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնարանների սաներից կազմված 16 թիմի մասնակցությամբ: Խրախուսման ֆունդն աննախադեպ էր: Մրցանակային տեղեր գրաված թիմերը և բոլոր մասնակիցները պարգևատրվել են արժեքավոր նվերներով, իսկ զինղեկները ստացել են մասնագրական (պուլկա), որը խիստ անհրաժեշտ է դպրոցներում: Ինչպես այս, այնպես էլ տարվա ընթացքում կազմակերպվելիք բոլոր միջոցառումները նվիրված են ԱՀ ՊԲ կազմավորման 30-ամյակին: Հաջորդ մեծ միջոցառումը լինելու է Մայիսի 9-ի կապակցությամբ: Մեր հաղթանակները մենք չպետք է անտեսենք, մատաղ սերունդը պետք է դաստիարակվի այն գաղափարով ու ոգով, որ երեք տասնամյակ մեր հաղթանակների և խաղաղության երաշխավոր եղել է, կա ու կլինի մեր Պաշտպանության բանակը: Այն պետք է լինի մեր հոգածության, սիրո և հպարտության գլխավոր օբյեկտը:



ՊԱՅՏՈՆԱԿԱՆ

ԱՐՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՄԱՆ

«19» ապրիլի 2022թ.

N128/Մ հրամանի

ք. Ստեփանակերտ

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ, ԿԵՆՏՐՈՆԱՅՎԱԾ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՅՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՅՎԱՅՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԱՆՅՎԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

- 1. Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական, կենտրոնացված ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման, անցկացման ժամկետները և անցկացման կարգը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:
2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի ղեկավար Շ. Սարգսյանին՝ հաստատված կարգը և ժամանակացույցը տպագրել «Լուսարար» պաշտոնաթերթի առաջիկա համարում և տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

Ա. ՀԱՎՈՐՑԱՆ

Հավելված 1
Արցախի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի
«19» ապրիլի 2022թ. N128/Մ հրամանի

ԿԱՐԳ

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ, ԿԵՆՏՐՈՆԱՅՎԱԾ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՅՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՅՎԱՅՄԱՆ

- 1. Սույն աշխատակարգով սահմանվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետև՝ Հաստատություն) 4-րդ դասարաններում գիտելիքների ստուգման, 9-րդ դասարաններում ավարտական և կենտրոնացված ավարտական և 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների անցկացման գործընթացը, որը ներառում է քննությունների հայտագրումը, կազմակերպումը, անցկացումը, ստուգումը, գնահատումը, արդյունքների հրապարակումը և բողոքարկումը:
2. Հաստատությունների 4-րդ դասարաններում անցկացվում է գիտելիքների ստուգում՝ հունիսի 10-21-ը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատությունների 9-րդ դասարաններում անցկացվում է ավարտական քննություններ՝ հունիսի 8-30-ը՝ համաձայն հավելված 2-ի, կենտրոնացված ավարտական քննություններ՝ «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից՝ հունիսի 28-ին և 30-ին:
4. Հաստատությունների 12-րդ դասարաններում անցկացվում են պետական ավարտական քննություններ՝ հունիսի 8-22-ը՝ համաձայն հավելված 2-ի:
5. Միևնույն առարկայից և՛ միասնական, և՛ պետական ավարտական քննություն հանձնելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում գրվում է միասնական քննության ավարտական մասի գնահատականը (միավորը):
6. Հունիսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները մինչև ապրիլի 1-ը գրավոր դիմում են հաստատության տնօրենին: Հաստատության տնօրենը ապրիլի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ քննություններ հանձնողների ցուցակը շրջանների, Ստեփանակերտ քաղաքի վարչակազմների կրթության և սպորտի բաժնի միջոցով փոխանցում է «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետև՝ ԳԹԿ):
7. 9-րդ դասարանի կենտրոնացված ավարտական և ավարտական քննություններ հանձնողների դիմում-հայտերը և ցուցակ-հայտերը Հաստատության տնօրենը լրացնում և ԳԹԿ-ին է փոխանցում փետրվարի 21-ից մինչև մարտի 10-ը:
8. Ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետև՝ Նախարարություն) գերազանցության մեդալի (այսուհետև՝ Մեդալ) հավակնորդներին թույլատրվում է մասնակցել քննության՝ Նախարարության հաստատած ցուցակի համաձայն: Քննությունից բացակայած կամ ուշացած Մեդալի հավակնորդ սովորողը գրկվում է Մեդալ ստանալու իրավունքից:
9. Ավարտական և պետական ավարտական քննությունները սկսվում են ժամը 10:00-ին: Սովորողները ուսումնական հաստատություն են ներկայանում ժամը 9:00-ին:
10. Կենտրոնացված ավարտական քննությունը սկսվում է ժամը 11:00-ին: Սովորողները քննական կենտրոններ են ներկայանում ժամը 10:00-ին:
11. Քննությունների միջև ընկած օրերին դասավանդող ուսուցիչները սովորողների համար քննական առարկաներից կազմակերպում են խորհրդատվություններ՝ Հաստատության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով:
12. 4-րդ դասարանում գիտելիքների ստուգումն անցկացվում է.
1) «Մայրենի» առարկայից՝ գրավոր (թեստ) քննությանը տրվում է 60 րոպե.
2) «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ) քննությանը տրվում է 60 րոպե.
3) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար նաև՝ «Ռուսաց լեզու» առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում.
4) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների ցանկության դեպքում «Մաթեմատիկա» առարկայի թեստերը թարգմանվում են ռուսերեն:
5) Գիտելիքների ստուգման առաջադրանքների թեստերը (4 տարբերակով) կազմում են Հաստատության մեթոդիկական կենտրոնի ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված նմուշների: Առաջադրանքների նյութը ընտրվում է Նախարարության կողմից երաշխավորված և Հաստատությունում գործածվող դասագրքերից.
6) Հաստատության տնօրենը հաստատում է առաջադրանքների թեստերը, կնքում և ծրարում: Ծրարը բացվում է գիտելիքների ստուգման օրը, քննասենյակում՝ սովորողների ներկայությամբ.
7) Գրավոր աշխատանքը գնահատվում է 10 միավորանոց համակարգով.
8) Գիտելիքների ստուգումն իրականացնում են դասավանդող ուսուցիչը և տնօրենի կողմից նշանակված ներկայացուցիչը.
9) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գիտելիքների ստուգման ժամանակ տրվում է լրացուցիչ 40 րոպե՝ ապահովելով սովորողի կարիքին համապատասխան պայմաններ:
13. 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում անցկացվող «Ռուսաց լեզու» և «Ռուս գրականություն» (բանավոր, ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար) առարկաների քննական առաջադրանքների հարցաշարերը և հարցատոմսերը կազմում են տվյալ Հաստատության առարկայական մեթոդական միավորումները՝ Նախարարության կողմից երաշխավորված դասագրքերի և նյութերի հիման վրա:
14. 9-րդ դասարանում գրավոր ավարտական և կենտրոնացված ավարտական քննական թեստերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից, առաջադրանքներն ընտրվում են Նախարարության կողմից երաշխավորված և Հաստատության կողմից գործածվող դասագրքերից և (կամ) ձեռնարկներից:
15. 12-րդ դասարանում պետական ավարտական քննական առարկաների թեստերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից, առաջադրանքներն ընտրվում են Նախարարության կողմից երաշխավորված շտեմարաններից և Հաստատությունում գործածվող դասագրքերից և (կամ) ձեռնարկներից:
16. «Ֆիզկուլտուրա» առարկայի 9-րդ դասարանում ավարտական քննությունը և 12-րդ դասարանում ամփոփիչ ստուգաքննությունները կազմվում են Հաստատության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ հետևյալ կազմով. հանձնաժողովի նախագահ, դասավանդող (քննող) ուսուցիչ և հանձնաժողովի երկու անդամներ:
17. 9-րդ դասարանի սովորողները հանձնում են ավարտական քննություններ.
1) «Հայոց լեզու» առարկայից՝ գրավոր (կենտրոնացված, թեստ) քննության տևողությունը՝ 120 րոպե.
2) «Գրականություն» առարկայից՝ բանավոր.
3) «Հայոց պատմություն» առարկայից՝ բանավոր.
4) «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (կենտրոնացված, թեստ) քննության տևողությունը՝ 120 րոպե.
5) «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն») սովորողի ընտրությամբ առարկայից՝ գրավոր (թեստ) քննության տևողությունը՝ 120 րոպե.
6) «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ սովորողի ընտրությամբ) առարկայից՝ բանավոր.
7) «Ֆիզկուլտուրա» առարկայից՝ քննաշրջանի ընթացքում (նորմատիվների հանձնում).
18. Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն») առարկայի ավարտական քննության թեստը սովորողի ցանկության դեպքում թարգմանվում է ռուսերեն:
19. 9-րդ դասարանում բանավոր քննությունները կազմակերպելու, անցկացնելու և գնահատելու նպատակով Հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են Հաստատության տնօրենը կամ նրա նշանակված ուսուցիչը (հանձնաժողովի նախագահ), տվյալ առարկայի ուսուցիչը (քննող ուսուցիչ) և ընթերակա (տվյալ կամ հարակից առարկայի մասնագետ): Ելնելով սովորողների թվից՝ բանավոր քննությունը կարող է կազմակերպվել 1-ից ավելի օրերում:
1) սովորողները քննասենյակ են մտնում ցուցակում իրենց անունների հերթականությամբ համապատասխան.
2) սովորողների ցուցակում սովորողն իր անվան դիմաց ստորագրում է, որից հետո քննասենյակում ընտրում է քննատոմսը.
3) քննատոմսը ընտրելուց հետո սովորողը քննասենյակում ստանում է բանավոր հարցման թերթ, որում կարող է գրի առնել իր պատասխանները, լրացուցիչ հարցերը և դրանց պատասխանները.
4) Սովորողի պատասխանը գնահատվում է 10 միավորանոց համակարգով:
20. Հաստատությունները «Գրականություն», «Հայոց պատմություն» և «Օտար լե-





ՀՀ ԲՈՒՇԵՐ

9 12-րդ դասարաններում ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ:

60. Կենտրոնացված ավարտական քննության առաջադրանքները ստուգվում են ԳԹԿ-ի տնօրենի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից:

61. Ստուգումն իրականացվում է ԳԹԿ-ի կողմից հաստատված հրապարակված «Ցուցումներ»-ի պահանջներին և գնահատման չափանիշներին համապատասխան: Գրավոր աշխատանքի սևագրությունը չի ստուգվում և չի գնահատվում:

62. Քննական գնահատականների ցուցակներն վավերացվում են ստուգող հանձնաժողովի նախագահի կողմից:

63. Ավարտական և պետական ավարտական քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են տվյալ քննության հաջորդ օրը՝ ժամը 14:00-ին:

Կենտրոնացված ավարտական քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են քննությունից հետո հինգերորդ օրը:

Քննական կենտրոնի ղեկավարը ցուցակների կրկնօրինակները փակցնում է քննական կենտրոնի մուտքի մոտ:

64. Բանավոր քննությունները ծայնագրվում կամ արձանագրվում են: Արձանագրության մեջ ներառվում են հարցատուսի համարը, հարցերը, պատասխանները: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, անդամները և տվյալ սովորողը:

65. Քննությունների կազմակերպման, անցկացման և արդյունքների գնահատման վերաբերյալ բոլորքները կարող են լինել՝

1) քննության անցկացման կարգի խախտման մասին:

2) քննության արդյունքների հետ անհամաձայնության մասին:

66. Սույն աշխատակարգի 64-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում սովորողը կարող է բողոք ներկայացնել քննական կենտրոնի ղեկավարին՝ քննության ավարտից անմիջապես հետո: Կենտրոնի ղեկավարը տեղում քննարկում և պատասխանում է բողոքը ներկայացնողին:

67. Սույն աշխատակարգի 64-րդ կետի 2-ին ենթակետում նշված դեպքում բողոքները ներկայացվում են բանավոր քննության ղեկավարին՝ քննության պահին կամ մինչև քննասենյակից դուրս գալը, գրավոր քննության դեպքում՝ քննության արդյունքները հրապարակելուց հետո 24 ժամվա ընթացքում՝ Հաստատության տնօրենին: Ավարտական և պետական ավարտական գրավոր քննության բողոքի արդյունքները ոչ ուշ, քան դիմումն ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում, գրավոր ներկայացվում է դիմողին: Կենտրոնացված ավարտական քննության գնահատականների վերաբերյալ բողոքը Հաստատության տնօրենի բողոքն ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում էլեկտրոնային եղանակով փոխանցում է ԳԹԿ:

Կենտրոնացված ավարտական քննության գնահատականի վերաբերյալ ԳԹԿ-ում դիմում-բողոքների քննարկումից հետո առարկայական հանձնաժողովը կարող է որոշում ընդունել քննության գնահատականի պահանջման կամ բարձրացման, ինչպես նաև իջեցման մասին, որը հրապարակվում է:

68. Բողոքարկման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում դիմումի հեղինակը կարող է բողոքարկել վերադասության կարգով՝ Նախարարություն և (կամ) դատարան:

Հավելված 2  
Արցախի Հանրապետության  
կրթության, գիտության, մշակույթի  
և սպորտի նախարարի  
«19» ապրիլի» 2022թ. N128/Մ հրամանի

ՃԱՄԿԵՏՆԵՐ  
2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒՊՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԲԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՅՎԱՅՄԱՆ  
12-րդ դասարան

Table with 2 columns: ԱՌԱՐԿԱ, ՕՐԵՐ. Rows include subjects like Հայոց լեզու, Հայոց պատմություն, Մաթեմատիկա, and «Ռուսաց լեզու».

9-րդ դասարան

Table with 2 columns: ԱՌԱՐԿԱ, ՕՐԵՐ. Rows include subjects like Հայոց պատմություն, Գրականություն, Օտար լեզու, Բնագիտություն, Հայոց լեզու, Մաթեմատիկա, Ֆիզիկոլոգիա, and «Ռուսաց լեզու».

4-րդ դասարան

Table with 2 columns: ԱՌԱՐԿԱ, ՕՐԵՐ. Rows include Մայրենի, Մաթեմատիկա, and «Ռուսաց լեզու».

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

«15» ապրիլի 2022թ N 416-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՏԱՅՎԱԾ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ՓՈՒՆՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱՆԱԿՐԻ ՈՒ ՍԵՆԵՂՅԱՏ ԵՎ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՅ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Արցախի Հանրապետությանը հատկացված 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավորի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով ստեղծելից համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»  
ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված  
Արցախի  
Հանրապետության կառավարության  
«15» ապրիլի 2022 թվականի  
N 416-Ն որոշման

Ց Ա Ն Կ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՏԱՅՎԱԾ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ՓՈՒՆՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱՆԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ

Table with 4 columns: Դասիչը, Բուիք, մասնագիտությունը, կրթական ծրագիրը, Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը, Ընդամենը, Այդ թվում՝ բանակից զորացրված, Բուիք կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը. Rows include various educational programs and their capacities.





ԱԶԳ - ԲԱՆԱԿ

ԹԻՎՈՒՆՔԸ՝ ԱՄՈՒՐ, ԶԻՆՎՈՐԸ՝ ՀՊԱՐՏ

Երբ վտանգված է հայրենիքը, զինվորն առաջնագիծ է շտապում, իսկ թիկունքում բոլորը միավորվում ու դառնում են մի կուռ ամբողջություն, կամավորականներն էլ իրար հերթ չեն տալիս...

Վերջին օրերին, առաջնագծի հետ կապված դեպքերով պայմանավորված, մեր ժողովրդի մեջ կրկին արթնացել է 88-ի ոգին...



չեցրել՝ համախմբվելու համուն զինվորի, համուն Արցախի:

Բոլորը ոտքի ելան, դարձան մեկ՝ համուն Արցախի անվտանգության: Այսպես եղել է միշտ՝ բոլոր ժամանակներում...

Փառուխի, Քարագուլիի դեպքերով մտահոգ մեր ժողովուրդը չվարանցեց նաև այս անգամ ու վճռական քայլերով կասեցրեց թշնամու առաջխաղացումը...

Ոտքի ելավ նաև թիկունքը՝ սատարելու սահմանին կանգնած զինվորին: Այդպես վարվում են բոլոր նրանք, ում համար թանկ է զինվորի կյանքը...

Օրեր շարունակ Նորադեղի հայրենասեր կանայք (նախաձեռնությունը Վիդա Գրիգորյանին է) թաղամաս առ թաղամաս արցախյան ժենգայլով հաց ու կարկանդակներ են թխել...

Ասկերանի ՄՊՍԿ բոլոր աշխատողներն էլ որոշեցին արհմիության անդամավճարներից գոյացած իրենց գումարով սեփական ձեռքերով տաք ուտեստներ պատրաստել և հասցնել դիրքապահ տղաներին...

Մեծ թարի վերադարձ: Մենք՝ ութերորդիցներս, շատ ենք սիրում ձեզ ու սպասում ձեր դարձի երանելի օրվան: 3-րդ «բ» դասարանի աշակերտներն իրենց դասվար Ս. Պետրոսյանի հետ կոչ են անում զինվորին՝ լինել ուժեղ, հայրենասեր

ուներն բոլորիս աջակցության կարիքը, որպեսզի ավելի վստահ կանգնեն մայր հողի վրա և մշտադրուն պաշտպանեն մեզ: Նրանց անմնացորդ նվիրումի դիմաց մեր այսօրվա նախաձեռնությունը թերևս մի փոքրիկ ուշադրություն է նրանց նկատմամբ:

Ամենաուպավորիչը և գովասանքի արժանի քայլն արեցին Ասկերանի միջնակարգ դպրոցի սաներն ու նրանց ծնողները: Նրանք ծանրոցներ պատրաստեցին՝ համել քաղցրավենիքներով ու քաջալերող նամակներով ոգևորելով զինվոր եղբայրներին: Բոլոր դասարաններն առանձին-առանձին իրենց սերն ու հավատն էին արտահայտել այդ նամակներում:

Ահա թե ինչ մտքեր են ծրարել Ասկերանի միջնակարգ դպրոցի 8-րդ «ա» դասարանի աշակերտներն իրենց նամակում: «Հայրց փառապան թանակի անպարտելի՝ զինվորներ, մենք հիացած ենք ձեր անկուրում կամքով, հայրենասիրությամբ ու դժվարություններից



չվախենալու ձեր վճռականությամբ: Մեր փոքրիկ ծանրոցը սիրով ուղարկում ենք ձեզ, դրա հետ՝ մեր աղոթքները, հույսն ու լավատեսությունը: Ապահով ու վստահ եղեք, որ ձեր թիկունքում անվախ սերունդ է դպրոց հաճախուն, հայերեն է սովորում ու հավատում է ձեզ, մեր հաղթանակին ու հավերժությանը: Համոզված եղեք, որ չնվաճած հաղթանակով պանծացողները միշտ պարտվողի հոգեբանություն ունեն, իսկ հայը միշտ արարելու ու շենացնելու է երկիրը:

Իմացե՛ք՝ մենք սպասում ենք ձեր վերադարձին: Կգաք ու կցրեք ձեր ծնողների տխրությունը, իսկ նրանք էլ կհպարտանան իրենց զինվոր որդիներով:

Խաղաղություն մեր աշխարհին: Ձեզ՝ բարի վերադարձ: Մենք՝ ութերորդիցներս, շատ ենք սիրում ձեզ ու սպասում ձեր դարձի երանելի օրվան:»

3-րդ «բ» դասարանի աշակերտներն իրենց դասվար Ս. Պետրոսյանի հետ կոչ են անում զինվորին՝ լինել ուժեղ, հայրենասեր

ու քաջասիրտ: «Մենք պետք է հզորանանք ու հետ բերենք այն ամենը, ինչ կորցրինք 44-օրյա պատերազմում: Այն հողը, որի վրա երազանքներ ու նպատակներ ունեցող հայ զինվորի արյուն է թափվել, սովորական հողակտոր չէ, այլ սուրբ հայրենիք: Խոստանում ենք լավ սովորել ու ձեր արժանի հետնորդ դառնալ:

Խաղաղություն մեր աշխարհին:»

7-րդ «բ» դասարանի աշակերտ փոքրիկ Հրայրի նամակը նույնպես անհնար է առանց հուզմունքի կարդալ: «Քարն, հայ զինվոր: Ես Հրայրն եմ: Ճակատագրի բերումով մեզ մեր գյուղից՝ հայրենի Խրամորթից, տեղափոխեցին Ասկերան՝ անվտանգության նկատառումներից ելնելով: Երբ թշնամին հայտնվեց Փառուխ գյուղում, դուք աննկուն կանգնեցիք ու կասեցրիք նրա հետագա առաջխաղացումը: Ցավով, ունեցանք զոհեր և վիրավորներ: Խրամորթ գյուղը գտնվում է թշնամու թիրախում, դրա համար էլ ստիպված ենք ապրել ուրիշ բնակավայրում: Ձեր շնորհիվ մենք շարունակում ենք դպրոց հաճախել ու սովորել:

Վստահ եմ, որ ձեր շնորհիվ էլ շուտով կկարողանամ ապրել իմ հայրենի գյուղում: Մեր խաղաղ գիշերների համար շնորհակալ ենք ձեզ:

Սիրով՝ Խրամորթից Ասկերան տեղափոխված յոթերորդի Հրայր:»

Բոլոր երեխաները սրտատրոփ սպասում են զինվոր եղբայրների պատասխան նամակներին: Դրանք շատ կարևոր են իրենց համար: Սահմանի մարտիկները սկսվում է թիկունքից, այսօր սա լավ են գիտակցում բոլոր արցախցիները: Նրանք ոչ միայն սահմանին կանգնած զինվորին են սատարում, այլև ռուս խաղաղապահներին, որոնք զիջել ու զօր մեր բանակի հետ հսկում են մեր անդրորդը: Հենց այս հանգամանքն են հաշվի առել Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղի կանայք, որ անտեսելով վտանգն ու վախը, Քարագուլի, Խրամորթի, Խնապատի, ինչպես նաև Խրամորթում տեղակայված ռուս խաղաղապահ զորակազմի դիրքերում գտնվող զինվորների, կամավորների և սպաների համար 200-ից ավելի ժենգայլով հաց ու կարկանդակներ են պատրաստել: Տիկին Վայրյան սիրով ու հավատով խնդրում է Աստծուն, որ խաղաղություն լինի, Քարագուլիսը ազատագրվի, ու բոլորով մի լավ քեֆ անեն:

Սա է արցախցու տեսակը՝ չկոտրվող ու ծնկի չեկող, վտանգներից ու դժվարություններից չվախեցող, որ բոլոր իրավիճակներում կարողանում է ուժ գտնել համախմբվելու ու հարատևելու համար:

Լավ օրինակը միշտ էլ վարակիչ է: Այսօր Արցախի բոլոր բնակավայրերում մարդիկ փորձում են ամուր կանգնել հայրենյալ պաշտպանի կողքին, ուշադրության կենտրոնում պահել նրան՝ հաղթանակի ու խաղաղասիրական մղումներից դրդված:

Հաղթանակներն իրականություն են դառնում, երբ ողջ ազգը բանակ է դառնում: Պատմությունը դա է ուսուցանել մեզ: Այդպես են կերտվել մեր բոլոր հաղթանակները:

Թող ամուր լինի մեր զինվորի բազուկը, և խաղաղությամբ բացվեն մեր բոլոր արշալույսները:

Սուրբյա ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ԲԵՉ, ԱՐՅԱ՛Խ



Սիրելի՛ «Լուսարար» Ապրիլյան պատերազմի վեցերորդ տարեկիցը և թուրքազերիների՝ Քարագուլի մի հատվածի նվաճումը և նրանց վայրագություններն ու սրբապղծությունները հիշեցրին Հաղորթուն նահատակված իմ սանի՝ Էդգար Դուլուխանյանի շարադրությունը

«Ես սիրում եմ քեզ, Արցախ» թեմայով: Ընթերցողին են ներկայացնում այդ աշխատանքը:

«Արցախն իմ հողն է, երկիրը, ուր ապրել են իմ նախնիները, ապրում են ես՝ խնուշինակցի եղբար Դուլուխանյանս:

Հարագատ են իմ երկրի ամեն մի թուփը, մի թիզ հողը, իմ գլխավերևի կապույտ երկինքը, հանդը ու արոտը, այգին ու անդաստանը:

Արցախի մի փոքրիկ անկյունն է Խնուշինակը՝ Խոնաչեն գետի ափին գտնվող գյուղը՝ իր հետաքրքիր մարդկանցով ու ավանդություններով:

Զգիտեմ՝ ինչու իմ գյուղին են վերագրվել բազում ծիծաղաշարժ պատմություններ ու անեկոտներ, մեղավոր՝ թե անմեղ է իմ բնօրրանը, Արցախի ինչ-ինչ անկյուններում կատարված դեպքեր ու իրադարձություններ կապել են իմ համապարտաբանների հետ՝ ընդգծելով նրանց արտասովոր միանությունն ու պարզությունը:

Բայց ես չեմ կարծում, որ խնուշինակցիներն այդքան պարզամիտ են ու միամիտ:

Ի՞նչ անենք, Սասունցի Դավիթն էլ, Սասնա բոլոր քաջերն էլ մի քիչ միամիտ են եղել ու ծուռ, բայց նրանք նենգ ու գոռոգ Մելիքին տապալել, մարդասիրաբար ցրել են բռնակալի բանակը, տուն արծակել բոլոր անմեղ մարդկանց, զինադադար կնքել, ցույց տվել, որ մենք երբեք անարդարացի կռիվ չենք մղում, ուրիշի հողին աչք չենք դնում, պահպանում ենք այն, ինչ մերն է, վերցնել ենք ուզում այն, ինչ մեզ է պատկանել ու պատկանում է:

Սասնա Դավթի նման է նաև արցախցին, որը, սրտում պահած ազատության հուրը, զսպելով արդար զայրույթը, երբեմն ընդվզելով, երբեմն ստիպված լքելով իր հողը, 1988 թվականին իր կտրական ոչ-ն է ասել ազերի-թուրքին, ոտքի կանգնել, արյամբ պաշտպանել հող հայրենին:

Շատերն են ընկել այդ ճանապարհին, տվել իրենց մատաղ կյանքը հայրենի սրբությունների, մշակույթի, պատմության, արդարության պահպանման ու վերականգնման համար:

Արցախին իրենց կյանքն են նվիրաբերել Մոնթե Մելքոնյանը, Լեոնիդ Ազգալոյանը, Աշոտ Դուլյանը (Բեկոր), բազում քաջորդիներ, մեր հայրենակիցները, համապարտաբանները:

Ինչպե՞ս չսիրես այն հողը, երկիրը, որ Արցախ է կոչվում, որի ամեն մի կտորը ներկված է այդ քաջորդիների բոսոր արյամբ: Ինչպե՞ս չիրենցես այն խոսքերը, որ ասել են այդ մարգարեները. «Եթե կորցնենք Արցախը, կփակվի հայոց պատմության վերջին էջը» (Մոնթե-Ավո):

«Սա Հայաստանն է, և վերջ...» (Լ. Ազգալոյան): Մի՞թե դավաճանություն չէ, եթե ասենք՝ հոգնել ենք կռվելուց, մի քիչ զիջենք և թշնամուն տանք նրա ուզածը՝ թեկուզ Շուշին ու Աղդամը:

Այսպես երբեք չի կարելի մտածել, ինչ ունենք, մերն է, ոչ ոք իրավունք չունի մեր սուրբ հողի մի պատառ անգամ խլել մեզանից: Ցավալի է, որ զինադադարի պայմաններում էլ զոհեր ենք ունենում, կորցնում ենք մեր երիտասարդ տղաներին, բայց մի պահ էլ մերքուստ հպարտանում ենք, որ հայի ոգին չի մեռել, հայն այսօր էլ պատրաստ է իր կյանքի գնով փրկել հող հայրենին, հետ շարտել զիվերաստներին, ցույց տալ, որ մեր կողքին էլ ապրում են և երբեմն էլ, երբ պահն է պահանջում, մարտիրոսվում նորօրյա վարդապետներ, մտղեհներ, ավուներ, լեոնիդներ, բեկորներ...

Ես սիրում եմ քեզ, Արցախ՝ իմ հնօրյա և նորօրյա բնօրրան, փյունիկի պես վերածնված երկիր, դու իմն ես, և ոչ ոք այն չի խլի իմ ծննդը:

Ներկայացրեց Կարինե ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ Խնուշինակի միջնակարգ դպրոցի Նախկին փոխպետն

ՄԱՍՓՐԵ ԱՐՔԱՆ ՊԱՏՊԱՄՈՒՄ Է

Օրերս Խնուշինակի միջնակարգ դպրոցում կայացավ բաց դաս՝ Մուշեղ Գալշոյանի «Մամփրե արքան» թեմայով:

«Մամփրե արքան» պատմվածքի թեման արդիական է: Կարծես ժամանակներ չեն անցել, և օր օրի բոլորիս գլխին կախված է սեփական հայրենիքում ապրել-չապրելու ճակատագրական հարցը: Եվ ո՞վ գիտի էլ ինչ փորձություններ են սպասվում դարերով տառապած ու ցաված ազգիս:

Պատերազմ, կոտորած, գաղթ... էլ ինչ-չեր ասես, որ չի տեսել Մամփրեն՝ հերոսը: Սակայն նա ընկճվողներից չէ, պատրաստ է նույնիսկ 80 տարեկանում սովորել հայոց այբուբենը և իրեն արքա հռչակել:

Արքա էր, որովհետև հայոց տառերն էին նրա ենթակայության տակ ու կազմ ու պատրաստ սպասում էին հրամանի: Եվ Մամփրեն վրեժ լուծեց, արդար վրեժ, որին արժանի էր «թուրքի լակոտ» Օսմանը:

Եվ Մ. Գալշոյանը մեզ է պատգամում մի մեծ խորհուրդ. մենք ենք տերը մեր ճակատագրի, մեր հայրենիքի: Մենք պետք է այսուհետ համախմբված պայքարենք և ամուր պահենք այն, ինչ մերն է: Իսկ որ այս լեռը, այս քարը, հողը, ջուրը և նույնիսկ օդը հայկականությամբ են շնչում, անհերքելի է:

Չկա ոչինչ հայրենիքից առավել սիրելի:

Ջոյա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԱՐՑԱՆ-ՍՓՅՈՒՌ

ԱՐՑԱՆԻ ՏԱՂԱՆՂԱՎՈՐ ԵՐԵՒԱՆԵՐԸ՝ ԼԻՔԱՆԱՆՈՒՄ

ԱՅ ԿԳՄՍՆ-ի հովանավորությամբ և Լիբանանի հայ համայնքի ՋԱԳ հանձնախմբի կազմակերպմամբ ապրիլի 2-9-ը Լիբանանում էր Արցախի տաղանդավոր երեխաների խումբը: Նախարարության կողմից խմբի ղեկավար է նշանակվել Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Արմեն Չոլախյանը, որը «Լուսարար»-ի խնդրանքով ներկայացրեց լիբանանյան այցի մանրամասները:

Նախ՝ ՋԱԳ-ի մասին: Զապավունը նշանակում է՝ Ջավախք, Արցախ, Հայաստան և վերակազմավորված «Արցախֆոնո»-ի անվանումն է: Տաղանդավոր երեխաներին ընտրել է ՋԱԳ-ի կարկառուն ներկայացուցիչ, Արցախի հետ ուղղակի առնչվող լիբանանահայ անձնավորություն՝ Ջաբար Քեշիշյանը, որի անունն անմիջականորեն կապված է Արցախի, հատկապես Շուշիի հետ: Շատերն են երևի հիշում, որ անցյալ տարի ամռանը նա Արցախում էր և հայտարարություն էր տարածել կրկին «Կարանդակ» երգչախումբը վերակազմավորելու մասին, որում կարող էին ընդգրկվել Արցախի բոլոր շրջաններից շնորհաշատ երեխաներ, և երկամսյա պարապմունքներից հետո Ստեփանակերտում՝ Ազատամարտիկների պուրակում, 44-օրյա պատերազմից հետո առաջին անգամ տրվեց կյանքի հարատևումը խորհրդանշող «Ղողանջ վերապրումի» համերգը: Լիբանանում հանդես գալու համար Ջ. Քեշիշյանն այդ երգչախմբից ընտրել էր ութ երեխաների, որոնք փայլուն են նաև այլ երաժշտարվեստներում: Նրանք տարբեր արվեստի դարձրեցին իրենց: Աննա Դանիլովա (մենթոր) և Լիա Մանասյան (ասմունք)՝ Շուշիից, Արսեն Սաֆարյան (շեփոխ), Կարեն Եսայան (դուդուկ), Աստղիկ Ավանեսյան (քանոն), Վլադիմիր Գալստյան (մենթոր)՝ Ստեփանակերտից, Տիգրան Ավագյան (դուդուկ)՝ Հարությունից, Կարեն Հարությունյան (մենթոր)՝ Մարտունու շրջանի Սոս գյուղից և նրանց բոլորին նվազակցող, արհեստավարժ դաշնակահարուհի Նադեժդա Հակոբյան:

Ա. Չոլախյանը պատմեց, որ քովիդի և առանձնապես 44-օրյա պատերազմի հետևանքներից առաջացած այն դատարկությունը, որ արդեն երեք տարի է, ինչ գրեթե անգործության է մատնել լիբանանահայ համայնքի մշակութային ընդհանրական կյանքը, իրենց այցելությունը դիտվեց իբրև արշալույս:

Լիբանանում անցկացրած մեկ շաբաթը հագեցած էր համերգային ծրագրերով ու հանդիպումներով: Նշենք դրանցից մի քանիսը, որից կարելի է պատկերացում կազմել լիբանանյան մեկշաբաթյա այդ օրերի մասին:

**Օր 1-ին:** Հանդիպում համազգային «Լևոն Շանթ» մշակութային կենտրոնում՝ համազգային շրջանային վարչության և խնամակալության անդամների և տեղի «Կարկաչ» մանկապատանեկան երգչախմբի հետ:

Երեկոյան՝ հավաք «Սարդարապատ» ակունքում ՅՅԳ պատանիների հետ, համերգ, այնուհետև՝ հյուրասիրություն և ժամանց:

**Օր 2-րդ:** Այնճար հայաբնակ գյուղավան: Այցելություն գրականագետ Պողոս Սնայանի տուն-թանգարան, Այնճարի բերդ, 44-օրյա մեր հերոս նահատակներից Գևորգ Հաճյանի ընտանիքին:

Համերգ Գալուստ Գյուլբենկյան դահլիճում:

**Օր 3-րդ:** Բուրջ Համուդի շրջանում գտնվող Ազգային Միացյալ Վարժարան, հանդիպում տնօրենների (երկտնօրինություն) հետ: Համերգ Հակոբ Տեր-Մելքոնյան թատերասրահում, որտեղ ներկա էին երեք տարբեր դպրոցների աշակերտներ: Կեսօրից հետո՝ Հարիսայի սրբատեղի, որտեղ տեղակայված են Մարիամ Աստվածածնի մեծ արձանը, եկեղեցիներ, Հայ կաթոլիկների Ձմռանի միաբանության վանքը:

**Օր 4-րդ:** Համերգ Համազգայինի Սելանթոն և Հայկ Արսլանյան ճեմարաններում: Հանդիպում տնօրենի հետ: Հայ կաթոլիկ Ար. Խաչ-Հարպոյան բարձրագույն վարժարանի տնօրենների հետ հանդիպում:

Կեսօրից հետո այցելություն Արամ Ա. Վեհափառ հայրապետին: Հանդիպում և երեխաների կատարումներ:

հանդիպման ժամանակ շեշտում էր, որ հակառակ պարտության և հուսալքումի, բեմի վրա կանգնած և այն ծաղկեցնող պատանիները հաղթանակած են արվեստով ու մշակույթով, նրանք են հույս ու հավատը, որոնցով կարելի է շատ բան վերականգնել:

«Հպարտության և մեծ պատասխանատվության զգացում ենք ապրում, երբ լսում էինք, որ Արցախ աշխարհը սփյուռքահայության սևեռակետը և կազդուրիչ ուժն է հանդիսացել պատմության ընթացքում և ցայսօր: 1988-ի Ղարաբաղյան շարժումից մինչև մեր օրերը կենսատու ուժի, պայքարի, բռնագրավյալ մեր հողերի վերատիրացման տեսլականի, սփյուռքահայության գոյատևման և մշակութային գարթոնքի խորհրդանշան է: Բոլոր հանդիպումներում այս միտքն է ընդգծվել, որ Արցախը վերապրումի կարիք չունի, որովհետև Արցախն անմահ է: Վերապրումի այս դրոշմը մեզ համար է, մեզ ապրեցնելու համար, Արցախով ապրելու համար է: Արցախը չմոռանալու և Արցախը չլքելու համար է: Արցախը մեր հաղթանակի խորհրդանշան է, որ թեև այսօր վիրավոր է, սակայն բնավ պարտված չէ», - շարունակում է իր տպավորությունները ներկայացնել խմբի ղեկավարը:

**Օր 5-րդ:** Ելույթ հայ կաթողիկե Հռիփսիմյանց վարժարանում, Ազգային Եղիշե Մանուկյան վարժարանում, կեսօրից՝ Բիթլայա շրջանի Դպրե վանք: Համերգ: Այց Ցեղասպանությանը նվիրված հուշարձանին:

**Օր 6-րդ:** Ելույթ Հայ Ավետարանական կենտրոնական բարձրագույն վարժարանում: Երեկոյան այցելություն ժպեյի շրջան, Հայոց ցեղասպանության թանգարան և Թռչնոց բույն:

Երեկոյան առաջին ընդհանուր համերգը Հակոբ Տեր-Մելքոնյան թատերասրահում:

**Օր 7-րդ:** Հանդիպում Լիբանանի հայոց թեմի առաջնորդ սրբազան Շահե Եպիսկոպոս Փանոսյանի հետ: Երեկոյան՝ գալա համերգ Հակոբ Տեր-Մելքոնյան թատերասրահում:

Սա շաբաթվա սեղմագիրն է: Իսկ ասելիքը շատ է: Ինչպես խմբի ղեկավար Արմեն Չոլախյանն է ասում՝ Լիբանանում անցկացրած յուրաքանչյուր օրվա մասին պատմություն կարելի է գրել հուզումով, ուրախության, կարոտի, գոհունակության, բայց

ամենից կարևորը՝ վերագարթոնքի, ոգևորության և հույսի մասին, որ ներարկեցին սփյուռքահայ մեր քույրերի ու եղբայրների սրտերում:

Արցախցի պատանիներն իրենց տաղանդն են հրամցրել շուրջ 2500 աշակերտների՝ նրանց ներշնչելու հետ միասին իրենք ևս ներշնչվելով սփյուռքահայ իրենց հասակակիցներից: Բոլոր համերգների բացմանը կազմակերպիչներն այս միտքն են արտահայտել. «Վերապրումի դրոշմը» իրենց ապրեցնելու, Արցախով ապրելու համար է, որ Արցախը մեր հաղթանակի խորհրդանշան է, թեև այսօր վիրավոր է, սակայն, բնավ պարտված չէ»:

Իսկ բեմավարությունը, ինչպես սովոր էինք տեսնել Արցախում, ամենայն ջերմությամբ կատարել, պատանիներին իրեն հատուկ հունդով ներկայացրել է և նրանց ինքնավստահությունն ամրապնդել Ջաբար Քեշիշյանը՝ մթնոլորտն ավելի ջերմացնելով: Նա ամեն



կան կրթարանները, որոնք, իրոք, հզոր են: Ուսուցիչները ցածր վարձատրությամբ հանդերձ՝ յուրաքանչյուրն իրեն զգում է իր դիրքի գինավոր: Լիբանանն ու Արցախը սրտակից երկրներ են, երկուսն էլ աշխարհաքաղաքական նույն հարվածներն են կրում: Այս երկրին էլ պատուհասած դժվարությունները, ինչը հատկապես անդրադառնում է տնտեսության անկման վրա, բնակչության արտագաղթի (ոչ միայն հայերի) մեծ պատճառ են հանդիսանում: Եվ հայ կրթական հաստատությունները և հոգևոր իշխանությունները ինչքան մեծ ջանքեր են գործադրում համայնքի պահպանման գործում: Սուր միջոցներ ունենալով հանդերձ՝ հյուրընկալել են արցախցիներին: Հաջորդը լինելու են ջախխախախտը, որոնց կարող են ընդունել մեկ-մեկուկես տարի միջոցների հայթայթումից հետո: Հակառակ Լիբանանի և Արցախի մեջ տիրող ծանր պայմանների, ՋԱԳ-ի հանձնախումբը նման նախաձեռնություն է կյանքի կոչել՝ ամրապնդելով լիբանանահայության և արցախցիների հոգեկան կապը և ցույց տալով, որ իրենք միշտ Արցախի կողքին են: Երեխաները հյուրընկալվել են իրենց հասակակիցների տներում, մոտիկից զգացել այդ հարազատությունը:

«Իմ ելույթներում ես էլ այն միտքն են հայտնել, որ ոչ միայն արցախցի տաղանդավոր պատանիները մեծ ուրախություն, ոգևորություն, լույսի շող սփռեցին լիբանանահայերի համար, ինչպես իրենք են ասում, այլև ինքներս լուսավորվեցինք նրանց շողով, և այդ ոգեշնչումը երկուստեք մեզ շատ կօգնի մեր ազգային պայքարում», - ասաց Ա. Չոլախյանը:

Արցախցիների այցը լիբանանահայ թերթերի ուշադրության կենտրոնում էր: Ա. Չոլախյանը ցույց տվեց մի քանի հոդվածներ «Ազգակ» օրաթերթից, որոնց վերնագրերից իսկ կարելի է պատկերացնել, որ այդ օրերին լիբանանահայ մեր հայրենակիցների ուրախությունը պատանի արցախցիներն էին և Արցախը. «Արցախցի տաղանդաւոր պատանիները խանդաւառեցին այնճարցիները», «Արցախցի տաղանդաւոր պատանիները կը շարունակեն ոգեշնչել լիբանանահայերը, յատկապէս՝ աշակերտները», «Հակոբ Տեր-Մելքոնեան»-ի բեմը վերածեցին կտոր մը հարազատ Արցախի»:

«ՋԱԳ-ի ատենապետ Նարե Գալեքերյանը նշեց, որ ամբողջ շաբաթ արցախցի տաղանդավոր պատանիները դարձրեցին մեր սրահների մեջ իրենց ելույթներով ոչ միայն գեղարվեստական հաճույք պատճառեցին լիբանանահայությանը, այլև հաստատեցին, որ «մեր ազգը կարելի չէ զգեստել. իրենց տունները ակամա լքած և անորոշության մեջ ապրող մեր պատանիները մեզ եկան ասելու, որ իրենց կամքն անկտրուր է, հավատքը՝ ամուր և հույսը՝ միշտ վառ: Հետևաբար մենք իրավունք չունենք հուսալքված մնալու, պետք է շարունակենք և ամրապնդենք մեր պայքարը հանուն հերոսական Արցախի, հանուն բռնագրավված տարածքների, հանուն ազգի միության և ազատության», - կարդում ենք թերթում:

ՋԱԳ-ի կողմից կազմակերպված Արցախի տաղանդավոր պատանիների «Ղողանջ վերապրումի» ելույթը Լիբանան-Արցախ օդակի ամրապնդումն է:

ՄՆԱՅԵՆ Ե ՆՈՒՅՆ ԼԱՎԱՏԵՍԸ



Մարդկային կյանքի արժեքավոր կողմերից մեկը հասարակության օգտակար լինելու պատասխանատվության գիտակցումն է: Եվ երբ մարդ իրեն կարողանում է լավագույնս դրսևորել իր ուղորտում, տվյալ դեպքում՝ մանկավարժական ասպարեզում, դրանով նպաստում է հանրությանը նվիրվելու վսեմ գործին՝ մատաղ սերնդի դաստիարակությանը: Ուղիղ 30 տարի Շուշիի Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում մանկավարժին հատուկ նվիրվածությամբ է աշխատում կրթօջախի երկարամյա դասվար Անահիտ Արզումանյանը: Նա կոլեկտիվի ակտիվ անդամներից է՝ հոգատար նախաձեռնող ու նվիրված:

Ունենալով աշխատանքային հարուստ փորձ՝ Անահիտ Արզումանյանը հասել է այնպիսի վարպետության, որով կարողանում է ճիշտ կազմակերպել իր մանկավարժական գործունեությունը:

Նրա ջերմ հայացքի ներքո կրթվել են հարյուրավոր սաներ, որոնցից շատերն արդեն հասուն, իր մեծ սրտի հպարտությունն են: Բազմակատակ մանկավարժի համար տարիները թե՛ ձեռքբերումների հանրագումար են և թե՛ վաստակի արգասիք:

Սիրում է իր շուրջը համախմբել կոլեկտիվի անդամներին և իր ջերմ շնչով վարակել բոլորին, վաստակ ունեցող ու սկսնակ դասվարներին: Նա ստեղծում է այն տաքուկ անկյունը, որի կարիքը զգում են շատերը: Եվ ծավալվող մտքերի փոխանակությունը շատ անգամ իր բարեբաղ ազդեցությունն է թողնում շրջապատի վրա՝ լինի դա դասի քննարկում կամ որպես ավագ ընկերոջ օգտակար խորհուրդ:

Անահիտ Արզումանյանը բարի է, սրտացավ և օժտված է կազմակերպչական ջիղով: Նրա դասվարական դասարանն այսօր էլ աչքի է ընկնում իր համախմբվածությամբ: Ուշագրավ միջոցառումների նախաձեռնող է նա:

Ա. Արզումանյանը դպրոցի արհեստակցական միության երկարամյա նախագահն էր Շուշիում: Այսօր, երբ շուշեցիներին համար շատ բան է իրար խառնել և շատ է զգացնել տալիս Արցախի հոգևոր մայրաքաղաքի կորստի փաստը, որ հանգեցրել է Շուշիի հասարակության ունեզրկման, Ա. Արզումանյանը դարձյալ չի կորցնում իր լավատեսությունը: Ուսուցչուհին, որ ամիսներ առաջ բոլորել է իր կյանքի 60-ամյակը, մնացել է նույն հավասարակշիռ և լավատես անձնավորությունը: Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնավորը կրթօջախը հարուստ ավանդույթներ շատ ունի, որի մի մասնիկն էլ պայմանավորված է Ա. Արզումանյանի մանկավարժական գործունեությամբ, մարդ, որ միաժամանակ և լավ մանկավարժ է, և ուշադիր մայր: Նրա ընտանիքը ավանդականի կողմն է արցախյան լեռնաշխարհում և մոտ է իր ակունքներին այնքան, որքան սառնորակ աղբյուրը, որ բխում է խորունկ ծորերից:

Ս. ԳԱՆԻԵԼՅԱՆ

Վարդիթեր ՀԱԿՈՒՅԱՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ

ՇՈՒՇԻ ՄԱՆԿԱԿԱՐԹԵՉՈՒՄ ԴԱՏԻԱՐԱՎԿՈՒՄ Է ԱՌՈՂ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՍԵՐՈՒՆԴ

Անցյալ տարվա հունիսի 1-ին Ստեփանավերտում վերաբացվեց Շուշիի պետական մանկապարտեզը...

Ֆոֆի շեշտում է գործընկերների ջանքերը, ստեղծագործականությունը, որ երիտասարդ են, եռանդուն, նախաձեռնող...



Օրերս «Լուսարար»-ը եղավ Շուշիի պետական մանկապարտեզում, որտեղ խմբերից մեկում հերթական բաց պարապմունք էր ֆիզկուլտուրայից...



Վերջին մրցածր պարանի ձգումն էր, որին միացան նաև մանկապարտեզի աշխատողներ՝ մրցակցային բուն պահեր առաջացնելով...

Մանկապարտեզն այդ օրը նաև հյուրեր ուներ՝ ռուս խաղաղապահներ: Եվ այդ պահին նաև մեզ՝ նախարարության ներկայացուցիչներին...

միջոցառումների սենյակը, խոհանոց և այլն, մեծագույն հարգանքով կհամակվեք այստեղ աշխատող յուրաքանչյուրի հանդեպ...

կուլտուրահանգի առաջնորդությամբ: Եվ անմիջապես էլ բարձր տրամադրությունը համակում է բոլորին: «Խու՛մբ, հավաք, զգաստ»...

Դրանից հետո սկսվում են խաղ-մրցումները: Խու՛մբը, բաժանվելով «Առյուծ» և «Արծիվ» անուններով երկու թիմի (ի դեպ, նրանց շապիկներին համապատասխան դաջվածք կար, որ նկարել էին դաստիարակները)...

Այս ամենն ուղեկցվում էին թիմերի և ներկայների կողմից աջակցման բուն, ոգևորող բացականչություններով:



թյան երաշխավորը՝ տալով հնարավորություն ապրելու և արարելու մեր երկրում: Հայաստանին և Ռուսաստանին կապում է դարավոր բարեկամությունը, որի պատմության մեջ կան մեծ հաղթանակներ և դեռ կշարունակվեն»,-իր ելույթում ասաց մանկապարտեզի տնօրենը:

Իսկ ռուս ռուս խաղաղապահն ասաց. «Շնորհակալ ենք այսպիսի հրաշալի տոնի համար, ցանկանում ենք, որ ուրախ լինեք ձեր ծնողների հետ, մեծանաք, դպրոց գնաք ձեր այս սուրբ, բազմաշաբաթ հողում: Մաղթում են խաղաղ երկիր ձեր գլխավերևում» և նվերներ հանձնեց երեխաներին:

Շուշիի կրթության և սպորտի բաժնի վարիչ Իրա Սարգսյանը կոչ արեց երեք չիուսահատվել: «Գեղեցիկ և հուզիչ միջոցառում էր: Մենք բոլորս պարտավոր ենք մեր պատասխանատվության սահմաններում կատարել այն ամենը, ինչ հնարավոր է մեր հայրենիքի կայացման ու գոյատևման համար: Թող եկող տարիները լինեն միայն երջանկության ու հաղթանակների տարիներ»:

ԱՅ ԿԳՄՍՆ նախադպրոցական կրթության բաժնի վարիչ Էլմիրա Յովհաննիսյանը, որպես ամփոփում՝ ասաց, որ միջոցառումը սկզբից մինչև վերջ ներծծված էր հայրենասիրությամբ: Պարապմունքը գերազանց էր, միջառարկայական կապն ապահովված էր: Ֆիզկուլտուրայի առարկայի երեք պահանջները՝ առողջապահական, կրթական, դաստիարակչական, առկա էին և իրականացվեց շատ գեղեցիկ կերպով:

Մեզ մնում է ավելացնել պարապմունքը կազմակերպող և այն գեղեցիկ ներկայացնելու համար միասնական ջանքեր գործադրած անձանց անունները: Ֆիզկուլտուրահանգիչ՝ Էլեոնորա Սարգսյան, դաստիարակներ Ինա Բարխուդարյան, Նարինե Հայրապետյան, պարուսույց՝ Անուշ Բաղդասարյան, երաժիշտ՝ Լուսինե Բալայան, նաև՝ ուրիշներ որոնք ապացուցեցին, որ Շուշիի մանկապարտեզում դաստիարակվում է առողջ և հայրենասեր սերունդ:

Ս. ԽԱԶՆՐՅԱՆ

ՀՐԱՆԱԾԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴՈՎ

Բնության զարթոնքի հետ մեր հույսերն էլ ծաղկում են: Եվ դարձյալ՝ մեր երեխաների շնորհիվ ու նրանց միջոցով:

միրա Յովհաննիսյանը, քաղաքապետարանի ԿՍ բաժնի պետ Թերեզա Դարախանյանը, ուրիշներ, որոնք, շրջելով տաղավարներով, իրենց զարմանքը՝ ոգևորված տեսածից: Մի տեղ երեխաները պարում էին, երգում, մի այլ տեղ՝ ցու-

կատարվել հանուն Աստծո, որպեսզի Ջատիկը գեղեցիկ տոնվի, որպեսզի մեր Տեր Հիսուս Քրիստո-

մանկապարտեզի ողջ անձնակազմին, երեխաներին, ծնողներին: - Թող Աստված լսի այս փոքրիկ հրեշտակների ձայնը և խաղաղություն պարզի մեր Արցախ աշխարհին, պահի-պահպանի մեր բանակը, սուրբ եկեղեցին»:



բյունը, որը մեզ համար կյանք է»: Բոլորը միասին սրտով կատարեցին «Հայր մեր»-ը. ապա վայելեցին երեխաների կատարողական շնորհքը: Թոթով լեզվով փոքրիկները ներկայացրին Մանկական աստվածաշնչից իրենց գիտելիքները, կատարեցին մանկական հոգևոր երգեր: «Իսկապես այս գեղեցիկ օրը մեզ համար դարձավ հաղթական,-

«Այսօր մեր բազմապիսի աղաչանքներն ունեն միայն մեկ բովանդակություն՝ խաղաղություն, որ այս փոքրիկները երբեք տխրություն չտեսնեն, նրանց դեմքին միշտ կայլի ժպիտը, հոգիներում բույն դնի միայն ուրախության թռչնակը: Տա՛ Աստված, որ ոչ մի մանուկ պատերազմ այլևս չտեսնի, բոլորս ապրենք ազատ ու անկախ Արցախում, երկնակամարում թևածեն միայն սպիտակաթուրյա աղավնիները»-բարեմաղթեց մանկապարտեզի տնօրեն Ռենա Բարխուդարյանը:

Ստեփանավերտի հ. 2 պետական մանկապարտեզը Սուրբ Հարության հրաշափառ տոնին խոր բովանդակությամբ ու անչափ գեղեցկությամբ է ներկայացել: Մանկապարտեզի բակը ասես ազգային կենցաղի ու հոգևոր հարստության ցուցադրման կենդանի թանգարան էր: Բոլոր 12 խմբերը և բազմամասնագիտական խումբը ներկայացել էին առանձին տաղավարով՝ մեկը մյուսից հարուստ, գեղեցիկ ձևավորված, և ամեն տեղ երեխաներն ու մանկապարտեզի աշխատողները՝ ազգային կերպարով: Ծաղկած ծառերի, կանաչ-կարմիր բնության, արևի ջերմ շողերի ներքո այնքա՛ն ներդաշնակ էր այդ ամենը: Տոնին ներկա էին հյուրեր՝ Ստեփանավերտի սուրբ Հակոբ եկեղեցու հովիվ՝ տեր Մինաս քահանան, ԱՅ ԿԳՄՍՆ կրթության և գիտության վարչության պետ Ռայա Մուսայեյանը, նախադպրոցական բաժնի վարիչ Էլ-

ցաղուրմ փոքրիկ ներկայացում, մյուսում՝ ազգային կենցաղավարությունն էր՝ արկանք, տաշտ, թոնրատուն, ազգային խոհանոց՝ ժենյալով հաց, կորկոտ աղանձ... Դիտարժան այս տեսարանը մանկապարտեզի ներսում շարունակեց խմբերից մեկը՝ գատկական հանդեսով: Տեր Մինասը նախ օրհնության ծես կատարեց. «Այս ի՛նչ հրաշք է, որի մեջ գտնվում ենք բոլորս: Այս ինչքա՛ն մեծ աշխատանք



սի հարությունը մենք իսկապես ավելի լավ ճանաչեցինք: Այստեղ կարծես ողջ Արցախ աշխարհն է՝ իր ավանդույթներով, կենցաղով, իր երեխաներով, իր հզորությամբ: Այստեղ մենք զգում ենք, որ պիտի հաղթահարենք դժվարությունները, փորձությունները: Հրաշք է այս ամենը, և մենք մեծ ուրախությամբ մասնակցում ենք այս հրաշքին, և ձեզ հետ միասին փառաբանում Աստծուն, նրա հրաշափառ հարու-

շարունակեց տեր Մինասը՝ իր երախտագիտությունը հայտնելով


Սեփ. լրատվություն





ՀՈՒՆ-ՀԱՆԴԻՊՈՒՄ

«ՏՈՒՄԻ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆՂԵՍ



հայկական ծագումով շվեյցարացի լուսանկարիչ Դեմիր Սյունեզյան և Սարգիս Ինջեյանին: Դեմիր Սյունեզյանը 2020 թ. 44-օրյա պատերազմի օրերին եղել է Արցախում, 40 օր լուսանկարել է պատերազմը և «Վիրավոր արծիվը» եռալեզու (անգլերեն, ֆրանսերեն, հայերեն) գրքի էջերում այդ օրերի մասին պատմող փաստագրական լուսանկարներն են: Այս կարևոր փաստագրական գրքի մի օրինակ նվիրվեց «Դիզակ Արտ»-ին:

Շնորհանդեսը բացեց «Դիզակ Արտ» կենտրոնի համահիմնադիր, Հայրուքի շրջվարչակազմի «Դիզակ» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր Լիանա Պետրոսյանը: «Խորեն Ղազարյանը հեղինակել է «Աղբուլաղ-Ավնադայր» և «Տումի» գրքերը: «Տումի» պատմաաշխարհագրական ակնարկներ»

մի կրտսեր թռան կինը՝ Զինա Գայանը, ներկայացրեց գրողի կենսագրականը:

Ծնվել է Տումիում, ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Ծառայել է խորհրդային բանակում, եղել է Մարշալ Բաբաջանյանի զինվորը: Տարբեր տարիների ղեկավարել է Հայրուքի շրջանի Տումի, Արևշատ, Ավնադայր, Էդիլու և այլ գյուղերի կրթօջախներ:

Անդրադարձ եղավ նաև գյուղից Մեծ Հայրենականին մասնակիցների մասին: Խ.Ղազարյանի 3 եղբայրները նույնպես մասնակցել են պատերազմին, և միայն մի եղբայրն է տուն եկել: Գրողի կինը՝ հայոց լեզվի և գրականության երկարամյա ուսուցչուհի Էմմա Սարգսյանը, ներկայացրեց հարազատ գյուղը և գրքի բովանդակությունը: Հեղինակն իր գիրքն սկսել է հայրենի ծննդավայրի անցյալի պատմությունից, անդրադարձել պատմության տարբեր ժամանակաշրջաններին մինչև իր օրերը, Արցախյան զոյամարտը: Օգտագործել է նաև հետաքրքիր պատմություններ համագյուղացիների մասին, սովորույթներ և այլն:

Խ.Ղազարյանի Նուշա դուստրը, որը երկար տարիներ աշխատել է Ազդիսի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, շնորհա-

ճամու տիրապետության տակ է մնացել նաև հոր շիրիմը, որին միշտ այցի էին գնում: Իսկ այժմ հույս ունի՝ կրկին է այցելելու և գտնելու է մոր պահած ջրի շշերը հոր շիրմաքարի մոտ և լվանալու է այն:

Հուլիս էր նաև գրողի թոռնուհի Արմինե Բաբայանի խոսքը՝ նվիրված սիրելի պապին, որն իրենց համար եղել է օրինակելի ու սիրելի կերպար: Կարոտով պատմեց, որ ամեն ամառ արծակուրդներին, մշտապես Տումիում են եղել 9 թոռներով և պապի հետ մասնակցել արշավների տարածքի պատմամշակութային հուշարձաններ՝ Գոչավանք ու Տող, Դիզակայտի Կատարովանք: Այժմ էլ հուշերով միշտ այնտեղ է՝ պապի այգում, որտեղ անցկացրել է լավագույն պահեր:

Երևանաբնակ Մարկ Հովհաննիսյանը, որը 2015թ. մի քանի օրով որպես զբոսաշրջիկ եղել է Տումիում և ապրել Խ.Ղազարյանի հարկի տակ, մեծ սիրով խոսեց իսկական հայի, նրա հյուրընկալ օջախի մասին:

Հյուրերից Ավետիս Խաչատրյանը, որը նույնպես եղել է Տումիում, մասնակցել «Դիզակի գույները» մրցույթի աշխատանքներին, անդրադարձավ կորուսյալ հայրենիքի խնդրին՝ ասելով, որ մենք պետք է դաստիարակենք մի սերունդ՝ մտքեղան ոգով, որ երբեք չկորցնենք հայրենիք ու դարեր շարունակ չերազենք կորցրածը հետ բերելու մասին: Ելույթներից հետո ներկայացրեց դիտեցին փոքրիկ տեսանյութ՝ Արցախի հանրային հեռուստատեսության «Իմ գրադարանում» հաղորդումից՝ ունկնդրելով Խ. Ղազարյանին: Այնուհետև «Դիզակ Արտ»-ի սաները հանդես եկան ազգագրական ու դասական երգերի կատարումներով: Երաժշտական կատարումներով հանդես եկան նաև Անուշ Ստեփանյանն ու տունեցի երգիչ Միտ Սույանը: Ավարտից հետո զրուցեցին Խ.Ղազարյանի դստեր՝ Նուշա Ղազարյանի հետ, որն այժմ բնակվում է Երևանում: Ասաց՝ ունի 2 որդի և 1 դուստր: Որդիներից Սարգիս Բաղդասարյանը մասնակցել է 44-օրյա պատերազմին, վիրավորվել: Այժմ էլ Հայոց բանակի սպան ծառայում է Արցախի զորամասերից



գիրքն առաջին անգամ լույս է տեսել 2003թ. և 2005թ. արժանացել Արցախի կառավարության եղիշեի անվան ամենամյա մրցանակին: Գրքի վերահրատարակումը մեծ խորհուրդ ունի այն տունեցիների, առհասարակ՝ բոլոր հաղորդակցիների համար ամմար հույսի մի շող է, որ մեր պապենական հողերը, որոնք օկուպացված են թշնամու կողմից, վաղ, թե ուշ վերադառնալու են իրենց իրական տերերին: Գրքի վերահրատարակված տարբերակի շնորհանդեսի կազմակերպման օրը պատահական չէր ընտրված. Խորեն Ղազարյանն այսօր կդառնար 94 տարեկան»,-ասաց Լ.Պետրոսյանը:

Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատի տնօրեն՝ Խ.Ղազարյանի կազմակերպչներին, «Արմավ» հրատարակչությանը, որ վերստին տպագրվել է հոր ստեղծագործությունը: Ցավով նշեց, որ թշնամու հետևանքով կազմակերպչներին, «Արմավ» հրատարակչությանը, որ վերստին տպագրվել է հոր ստեղծագործությունը: Ցավով նշեց, որ թշ-



նակում: Սյուզաննա դուստրն ունի 4 զավակ և բնակվում է Արցախում: Հավատում է՝ տուն են վերադառնալու:

Զոհրաբ ԸՈՒՅՆՍՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«26.04.2022թ. աճուրդը չի կայացել հայտ ներկայացված չլինելու պատճառով:

«Սնանկության մասին» ԱՀ օրենքի 89-րդ հոդվածի համաձայն 2022թ-ի մայիսի 24-ին ժամը 12:00-ին «Մայակ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանի կողմից, ԱՀ ԸԻ առաջին ատյանի դատարանի՝ Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների 42 հասցեում հայտարարվում է դասական եղանակով աճուրդ վաճառքը հետևյալ լոտերով:

**ԼՈՏ 1՝** Կաթսայատուն (փաստացի հացի արտադրամաս): Սեփականության վկայականի համար՝ 115352: Սեփականատեր՝ Էդգար Լավրենտի Միրզոյան, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի նկարագրությունը՝ շենքի մակերեսը կազմում է 166,16 ք.մ, հողամասի մակերեսը կազմում է 307,0 ք.մ: Վիճակը՝ նորմալ: Հասցե՝ ԱՀ, ք.Ստեփանակերտ Ազատամարտիկների փ. ք.52/11: Սեկնարկային գին **18.688.000 ՀՀ դրամ:**

**Լոտ 2՝** Գրասենյակ: Սեփականության վկայականի համար՝ 081575: Սեփականատեր՝ Արզան Լավրենտի Միրզոյան, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի նկարագրությունը՝ շենքի մակերեսը կազմում է 11,89 ք.մ: Վիճակը միջին: Հասցե՝ ԱՀ, ք.Ստեփանակերտ Ա.Մանուկյանի փ. ք.10: Սեկնարկային գին՝ **921.600 ՀՀ դրամ:**

**Լոտ 3՝** Հողամաս: Սեփականության վկայականի համար՝ 094690: Սեփականատեր՝ Արզան Լավրենտի Միրզոյան, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի նկարագրությունը՝ հողամասի մակերեսը կազմում է 1410,0 ք.մ: Վիճակը՝ լավ: Հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ստարովոյտովա փ.: Սեկնարկային գին՝ **8.806.400 ՀՀ դրամ:**

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ՖԱ դեպոզիտ անձնագրի պատճենը, իսկ ԻԱ դեպոզիտ՝ պետ.գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթերը: Նախավճարը կազմում է մեկնարկային գնի 5 տոկոսը, որը փոխանցվում է սնանկության հատուկ հաշվին՝ «Արցախբանկ» ՓԲԸ «Տիգրանակերտ» մ/դ հ/հ 22301050288600 : Աճուրդին մասնակցելու ցանկացողները աճուրդին նախորդող 5 օրվա ընթացքում, ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա ժամը 16.00, կարող են հայտ ներկայացնել՝ ԼՀՀ ընդհա-

նուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գնորդը կրելու է գույքի ձևակերպման, գրանցման և գույքահարկի պարտքերի վճարման պարտավորությունները: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանին, հեռ. 097-22-29-22 կամ 093-89-22-79»:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

ԿՈՐԵԼ Է

Գոհար Էդուարդի Խաչատրյանի (ծնված 27.10.2000թ., Մարտունի շրջան, գ. Ջիվանի, անձնագիր՝ AR 0471122), միջնակարգ կրթության ատեստատը՝ տրված Ջիվանիի միջնակարգ դպրոցի կողմից 2018թ. (մնացել է Շուշիի տեխնոլոգիական համալսարանում 2020թ. պատերազմի հետևանքով): Համարել անվավեր:

ԼՈՒՍԱՐԱՐ  
ԽՄԲԱԳԻՐ  
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝  
«Լուսարար»  
ՓԲԸ

Ստեփանակերտ,  
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,  
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության 30.04.2022թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: